№ 212 ՇԱԲԱԹ ՍԵՊՏԵՄԲԵՐԻ 27

1908
ԵՐԵՍՈՒՆՎԵՑԵՐՈՐԴ ՏԱՐԻ

ՇԱԲԱԹ ՍԵՊՏԵՄԲԵՐԻ 27 № 212

ՄՇԱԿ

Տարեկան գինը 10 ռուբլի. կէս տարվանը 6 ռուբլի.
Առանձին համարները ԱՄԵՆ ՏԵՂ 5 ԿՈՊ.
Թիֆլիսում գրվում են խմբագրության մէջ.
Մեր հասցէն՝ Тифлисъ, редакція „Мшакъ“
Базарная ул. д. Тамамшева № 16.
Կամ Tiflis, Rédaction „Mschak“.
ՏԷԼԷՖՈՆ № 253.

Խմբագրությունը բաց է առաւօտեան 10—2 (բացի կիրակի և տօն օրերից)
Ցայտարարություն ընդունվում է ամեն լեզուով
Ցայտարարությունների համար վճարում են իւրաքանչիւր տողատեղին 10 կոպէկ
ՏԷԼԷՖՈՆ № 253.

ՀԻՄՆԱԴԻՐ ԳՐԻԳՈՐ ԱՐՇԱՐՈՒՆԻ

ՄՇԱԿ
(36-րդ ՏԱՐԻ)
ԱՊԱՌԻԿ ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ
ՉԷ ԸՆԴՈՒՆՎՈՒՄ
Հասցէն՝
ТИФЛИСЪ, Редакція «МШАКЪ».
TIFLIS, Rédaction du journal «MSCHAK».

ՀՈԿՏԵՄԲԵՐԻ 1-ԻՑ ՄԻՆՉԵՒ ՏԱՐՎԱՑ ՎԵՐՋԸ 3 ՌՈՒԲ.

Ամսական Մէկ ռուբլի

Ամերիկա տարեկան	6 դոլլար
Եւրոպա »	30 ֆրանկ
Պարսկաստան »	10 ռուբլի
Հասցէն փոխելու համար պէտք է ուղարկել	40 կոպ.

ԱՌԻԵՒՏՐԱԿԱՆ ԿՈՒՐՍԵՐ
ԵՐԿՈՒ ՏԵՂԻ ԱՆՁԱՆՑ ՀԱՄԱՐ
(Тифлисъ. Сололаки, Лермонтовская улица № 15)
Ուսումը սկսվելու է սեպտեմբերի 15-ից։ Ընդունելությունը սեպտեմբերի 1-ից։ Ամեն օր, առաւօտեան ժամը 10-ից մինչև 12 ը, և երեկոյեան 4-ից մինչև 6 ժամը։ Ծրագիրը և կանոնները տրվում և ուղարկվում են ցանկացողներին ձրիապէս։
(Ե. Դ.) տո. 16—10

ԱՏԱՄՆԱԲՈՅԺ
Մ. Գ. ԴԱՆԻԷԼ-ԲԷԿ
Ընդունելություն՝ Առաւօտեան 10—2 ժամը, Երեկոյեան 4—6 »
Հասցէ՝ Ртищевская ул., д. № 7.
(Ե. Հ. Շ.) ա. 50—10

ՄԵԾ ՊԵՏՈՒԹԻՒՆՆԵՐԸ ԵՒ ԲԵՐԼԻՆԻ ԴԱՇՆԱԳԻՐԸ

Բոլգարիայի անկախ թագաւորության հրատարակությունը, Բոսնիա-Հերցեգովինայի միացումը Աւստրիայի հետ, Կրետէ կղզու միացումը Յունաստանի հետ անագին փոթորիկ են առաջ բերել քաղաքական աշխարհում, ինչպէս և պէտք էր սպասել։

Երէկ մենք արտայայտեցինք այն կարծիքը, թէ քաղաքական այդ խոշոր դէպքերը, որոնք յոգի են անագին բառգությունները և կարող են սպառնական դառնալ համաշխարհային խաղաղության համար, առաջ կը բերեն մեծ պետությունների մէջ նորանոր համախմբումներ և նորանոր դաշնակցություններ։ Ամենից շատ շանրգրդուած, ի հարկէ, Թիւրքիան է, որ իր ազատագրության սկզբին հանդիպում է այդպիսի մի ծանր փորձանքի։ Նա հաւատում էր մինչև այժմ իրան վեհապետական իր աւունքներ ունեցող Բոլգարիայի և Կրետէի վրա։ Նա իր սեփականությունն էր համարում Բոսնիան և Հերցեգովինան և յանկարծ մի օրում, նա ստանում է երեք սոսկալի հարուած։ Եւ նա, Թիւրքիան, որ ամբողջ 30 տարի ոտնակոխ էր անում Բերլինի դաշնագիրը, ոչ մի ուշադրություն չէր դարձնում այն ազգերի բողոքների վրա, որոնց ապահովությունն էր երաշխաւորել այդ դաշնագիրը, ուշադրություն չէր դարձնում մեծ պետությունների պլատոնական առաջադրությունների վրա, այսօր հանդէս է գալիս բողոքով թէ խախտված է Բերլինի դաշնագիրը և պէտք է վերականգնել խախտումը։

Առ այժմ Թիւրքիան խոհեմությունն ունեցաւ պատերազմ չը յայտարարել ոչ Բոլգարիային, ոչ Աւստրիային, որոնց նա համարում է խախտողներ Բերլինի դաշնագրի, և բողոքի կոչումն արեց միայն այդ դաշնագիրը ստորագրող մեծ պետություններին, խնդրելով միջամտել և թոյլ չը տալ խախտել Բերլինի դաշնագիրը, այն դաշնագիրը, որ նա ամբողջ 30 տարի խախտում էր անպատիժ։ Ճակատագրի դառն հեգնություն, Ամբողջ 30 տարի Թիւրքիայի ճնշված, հարստահարված մանր ազգությունները էին բողոքում Բերլինի դաշնագրի խախտման դէմ Թիւրքիայի ձեռքով. ամբողջ 30 տարի եւրոպական մեծ պետությունները էին նկատողությունները ադնում սուլթան Աբդիւլ-Համիդին այդ խախտման առիթով և նա ոչ մի ուշադրություն չէր դարձնում, իսկ այսօր ինքը Թիւրքիան, սուլթանն է կոչ անում և բողոքում, որ Բերլինի դաշնագիրը անշնագիրը սրբությամբ չէ պահպանվում։

Եւ գարմանալին այն է, որ Անգլիան, Ֆրանսիան և Ռուսաստանը, որոնք ամենից շատ բողոքներ և առաջադրություններ ու նոյնիսկ սպառնալիքներ էին անում Թիւրքիային և սուլթանին՝ Բերլինի դաշնագրի 23-րդ 61-րդ և այլ յոդուածներ (մակեդոնական և հայկական հարցերի առիթով) չը կատարելու համար, այսօր ապօրէն են գտնում Բոլգարիայի և Աւստրիայի վարմունքը, համառում են այդ վարմունքը խախտումն Բերլինի դաշնագրի և յայտնում են, որ թոյլ չեն տալ այդպիսի խախտումն։

Անգլիան, Ֆրանսիան և Ռուսաստանը, ամենից շատ բողոքողները, ոչ մի միջոցի չը դիմեցին, ոչ մի իրական դիմադրություն ցոյց չը տուեցին Թիւրքիային, երբ սա 30 տարվայ ընթացքում ամեն մի քայլափոխում խախտում էր Բերլինի դաշնագիրը, իսկ այսօր, երբ նոյն խախտումը կատարում են Բոլգարիան և Աւստրիան, նոանք յայտնում են, որ այդ մտքի հետ հաշտվել չեն կարող, որ պէտք է յարգել միջազգային դաշնագիրը։

Այս ամենից Թիւրքիան մի օրինակելի խրատ կարող է քաղել ապագայում իր համար, այն, որ պէտք է յարգել միջազգային դաշնագիրը և անպատիժ չէ կարելի խախտել նրանց։

Յաջորդ անգամ մենք կը խօսենք թէ որքան իրական կամ արդարացուցիչ է Բոլգարիայի և Աւստրիայի վարմունքը և ինչ օրինաւոր միջոց կայ լուծելու մի վէճ, որ սպառնում է համաշխարհային խաղաղության։

Հ. Առաքելեան

ԿԱՌԱՎԱՐԱԿԱՆ ԿԱՐԳԱԴՐՈՒԹԻՒՆ

Պետերբուրգ, 25 սեպտ. (Պաշտօնական)։

Ի նկատի ունենալով Պետերբուրգի Կայսերական համալսարանի ուսանողների մի մասի յայտարարած գործադուլը և այդ գործի նախաձեռնողների ակներև ցանկությունը՝ դադարեցնել պատասխանատուների շարունակումը կայսրության և այլ բարձրագոյն դպրոցներում, մինիստրների խորհուրդը քննության ենթարկեց այն միջոցների հարցը, որոնք անհրաժեշտ են վերադարձնելու ակադեմիական կեանքը իր հանգիստ հոսանքի մէջ։ Նախ և առաջ մինիստրների խորհուրդը կանգ առաւ այն պատճառների վրա, որոնք առաջացրել են յուզմունք ուսանողների շրջանում, և այն առիթների վրա, որոնք գործադուլ յայտարարելու պատճառ են դարձել։ Որպէս յայտնի է, ուսանողների մէջ դժգոհություն ծագելու գլխաւոր աղբիւր ծառայեցին ժողովրդական լուսաւորության մինիստրության վերջին կարգադրությունները։ Այդ կարգադրությունները բացատրվում են որպէս բարձրագոյն դպրոցների ինքնավար իրաւունքների սահմանափակումն, և այդ բացատրությունը կոդմակիցներ է գտնում մինչև անգամ պրոֆէսորների մէջ, որոնք թէպէտև համոզում էին ուսանողներին չը դադարեցնել պարապմունքները, բայց միաժամանակ այս կամ այն ճանապարհով ուսանողներին հասկացնում էին, որ ինքնավարության համար կռիւը ինքը վերցնում է իր վրա, և այդպիսի մի յայտարարություն չէր կարող գրգռիչ ազդեցություն չունենալ ուսանողների վրա։ Քննվող հարցի էությունը կայանում է. մինիստրների խորհրդի կարծիքով, 1905 թուի օգոստոսի 27-ին բարձրագոյն դպրոցներին շնորհված իրաւունքների ծանոթները բացատրելու մտքի մէջ։ Այն ինչ մի քանի ուսանողական խմբեր համալսարանների կառավարչությունների նոր կարգը բացատրում էին որպէս լեգիտիմական կազմակերպությունների բաղաքական նուաճում, և մի քանի բարձրագոյն դպրոցների խորհուրդները հակամէտ էին հասկանալու նոր շնորհված կարգը որպէս պրոֆէսորների իրաւունքը՝ կանոնաւորել ակադեմիական կեանքը, չը նեղվելով գոյություն ունեցող օրէնսդրությունից։ Կառավարությունը հէնց սկզբից կարծում էր, որ բարձրագոյն դպրոցների վարչության այդ նոր կարգը իրաւունք և պարտաւորություն է դնում պրոֆէսորական կոլլեգիաների վրա ղեկավարել համալսարանական ներքին կեանքը գործադրվող օրէնքի շրջանակներում, այն է՝ ընտրել ռեկտորներին, դեկաններին, միջոցներ ձեռք առնել ապահովելու ուսումնական զբաղմունքների կանոնաւոր ընթացքը և կարգը դպրոցների պատերում, որը ուսումնարանական շրջանների հոգաբարձուներին ստորագրեալ տեսչությունը վերացնելուց յետոյ պէտք է ռեկտորի և պրոֆէսորների խորհրդի անմիջական հոգածության առարկայ դառնար։ Միևնոյն ժամանակ կառավարությունը գտնում էր, որ նրա հայեցքները բարձրագոյն դպրոցների նոր կազմության վրա պէտք է իրագործվին համալսարանական կանոնադրության նախագծի մէջ, որը պէտք է առաջարկվէր օրէնսդրական հիմնարկությունների հաւանությանը։ Հը խօսելով արդէն այն բանի մասին, որ մինչև պատշաճաւոր բարձր հիմնարկությունը կորոշէր գանազան կերպ բացատրվող օրէնքի ճիշտ միտքը, կառավարչական իշխանության արժանապատուությունն իսկ չէ թոյլ տալիս շեղվել այն ճանապարհից, որ նա օրինական է համարում, և կառավարությունը չէր կարող չը տեսնել, որ կարգադրիչ օրգանների անհնազանդությունը նրա պահանջներին և ցուցմունքներին շատ անցանկալի հետեւանքներ կը հասցնի։ Թէպէտ և ուսումնական զբաղմունքները այս վերջին երկու տարուս առանց ընդմիջումների էին ընթանում, բայց նրանց ընթացքը չէր կարելի կանոնաւոր համարել, որովհետև բարձրագոյն դպրոցների լցնումը այնպիսի անձերով, որոնք չեն պատրաստված իրագործելու համալսարանական գիտությունը, զանազան անուններով ինքնակամ կազմակերպությունների երևալը համալսարաններում, որոնք իրագործում էին հատուկ ուսանողության ներկայացուցչության նշանակությունը և իրանց իրաւունքն էին համարում ազդել պրոֆէսորների խորհուրդների վրա, վերջապէս ներքին անկարգությունները, որոնք առանձին դէպքերում ամենասուր արտայայտություններ ունէին,—խիստ անբնական երեւոյթներ էին։ Այդպիսի հանգամանքներում կառավարությունը իր իրաւունքը չէր համարում ձեռքերը ծալած նստել, մանաւանդ որ համալսարանական կանոնադրության քննությունը Պետական Դումայում և Պետական Խորհրդում բաւական երկար ժամանակ կը պահանջէ, այն ինչ ձգձգվող, թէպէտ և կամայականօրէն սահմանված ապօրէն կանոնների ապօրէն գործադրությամբ կեանքի մէջ արմատանում էին կառավարության կարծիքով անթոյլատրելի կարգեր։ Ի նկատի ունենալով այդ, դեռ ժողովրդական լուսաւորության մինիստր օբէր-հոֆմէյստէր ֆոն-Կաուֆմանի ժամանակ, մինիստրների խորհուրդը պարտաւորեցրեց նրան և մնացած շահագրգռված մինիստրներին չը թոյլ տալ, որ ընդունվեն որպէս օտար ունկնդիրներ այնպիսի անձանց, որոնք դրա իրաւունքները չունեն, և չը թոյլ տալ, որ գոյություն ունենայ համալսարաններում ներկայացուցչությունը բոլոր ուսանողությունից, նոյնպէս և ուսանող-հրէաների սահմանված նորմայից անցնելը։ Միևնոյն ժամանակ, որպէս յայտնի է, կառավարությունը առանձին ուսումնարանական խմբերին իրաւունքից՝ դիմել իրանց պրոֆէսորներին իրանց հետաքրքրող հարցերով ընտրեալ-միջնորդ ուսանողների միջոցով, բայց նա թոյլատրելի չէր համարում, որ այդ միջնորդները միանան և կազմեն մի ինչ-որ մշտական ներկայացուցչական կազմակերպություն, որովհետև փորձը ցոյց տուեց, որ այդպիսի կազմակերպությունները ձեռք են բերում անխուսափելիօրէն քաղաքական բնաւորություն։ Վերջերս մինիստրների խորհուրդը որոշեց հնարաւորություն տալ իգական սեռի անձանց, որոնք թէև ապօրինի կերպով էին մտած համալսարանները, բայց բարեխղճաբար իրանց ուսանողուհիներ էին համարում, աւարտել իրանց համալսարանական դասընթացքները, այնպէս որ եթէ այդ որոշումը կեանքի մէջ մտցնելու համար տէխնիկական պայմանները պահանջէին որևէ բացատրություններ, այդպիսի բացատրությունների համար համալսարանները պարտաւոր էին դիմել ժողովրդական լուսաւորության մինիստրին։ Վերջապէս կառավարությունը անհրաժեշտ համարեց մի ընդհանուր նորմա անցկացնել բարձրագոյն դպրոցները մտնող հրէաների համար, որպէսզի այդ գործում մշտական տատանումներ չը լինեն։ Այդ բոլոր միջոցների իրագործումը մեծ շփոթներ առաջացրեց այս վերջին երկու տարվայ ընթացքում, և, վերջապէս, ուսանողության մի մասը այժմ յարմար ժամանակ համարեց ազդել իր ընկերների վրա զբաղմունքները դադարեցնելու մտքով, մտածելով դրանով իր հերթին ճնշումն գործ դնել կառավարության և հասարակական կարծիքի վրա։ Այդ նպատակով գործադուլ արվեց Պետերբուրգի Կայսերական համալսարանում և մի քանի ուրիշ բարձրագոյն դպրոցներում, այնպէս որ խիստ ագիտացիա է կատարվում որքան հնար է լայն ծաւալ տալ ագիտացիային և ուրիշ տեղերում։

Քննելով այդ կերպ ստեղծված գործերի դրությունը և աչքի առաջ ունենալով այն եղած տեղեկությունները, որ ուսանողների շատ նշանաւոր թիւ անկասկած ցանկանում է շարունակել ընդհատված ուսումնական զբաղմունքները, մինիստրների խորհուրդը եկաւ այն համոզման, որ կառավարության պարտաւորությունն է ապահովել ուսումնական զբաղմունքների շարունակությունը, այն ուսանողների համար, որոնք այդ ցանկանում են։ Այդ գործում կառավարությունը ամբողջապէս յոյս է դնում պարոններ պրոֆէսորների վրա, որոնք կատարած չէին լինի իրանց պաշտօնական պարտաւորությունը, եթէ, ենթարկվելով գործադուլ անողների ճնշման, զրկէին պարապել ցանկացող ուսանողներին իրանց զբաղմունքները շարունակելու միջոցներից։ Կառավարության երկրորդ պարտաւորությունն է պաշտպանել թէ ուսանողներին և թէ պրոֆէսորներին գործադուլ անողների բռնություններից, որոնք կը վտանգային բռնի կերպով չը տալ շարունակելու համալսարանական զբաղմունքները։ Վերջապէս կառավարությունը պարտաւոր է պահպանել և արտաքին հանգստությունը և եթէ արտաքին կեանքի հանգիստ ընթացքը կը խախտեն ուսանողները, այն ժամանակ պէտք է անյապաղ ամենառանդուն միջոցներ ձեռք առնել օրէնքը խախտողների դէմ։

Ուստի մինիստրների խորհուրդը կատարեալ յոյս կապելով այն ուսանողների մեծամասնության խոհեմության վրա, որոնք ակներև հասկանում են այն ենթադրության անմտությունը՝ թէ կառավարությունը կը փոխէ իր հայեցքները և կարգադրությունները ուսանողական գործադուլների ազդեցության տակ, հետևեալ վճիռները կայացրեց. 1) առաջարկել գործադուլ արած բարձրագոյն դպրոցների պրոֆէսորներին շարունակել դասախօսությունների ընթերցումը. 2) եթէ որևէ մէկը ֆիզիքական արգելքներ կը յարուցանէ այդ բանի դէմ, առաջարկել այդ դպրոցների խորհուրդներին բոլոր ներքին միջոցները գործ դնել անկարգությունը դադարեցնելու և անյապաղ պարապմունքները վերսկսելու համար. 3) եթէ պրոֆէսորների խորհուրդները անկարող կը լինեն կարգը պահպանել դպրոցի սեփական միջոցներով, առաջարկել նրանց դիմել քաղաքացիական իշխանությունների աջակցությանը. 4) յանձնարարել Պետերբուրգի քաղաքապետին և այլ համալսարանական քաղաքների բարձր իշխանաւոր անձանց՝ ոստիկանական միջոցներ չը գործ դնել գործադուլ անող ուսանողների դէմ, քանի որ նրանք չեն յանցանում միայն դասախօսություններին, չը թոյլ տալ կամայականության կամ բռնության ոչ մի արտայայտություն ուրիշ անձանց վրա, իսկ եթէ ծանուցում կը ստացվի համալսարանական իշխանությունից, որ բռնություններ են տեղի ունենում դպրոցի մէջ,—անյապաղ գործադրել յանցաւորների վերաբերմամբ ազդելու բոլոր օրէնական միջոցները։

ՎԵՐՋԻՆ ՏԵՂԵԿՈՒԹԻՒՆՆԵՐ

Էջմիածնից երէկ ստացանք, հետևեալ հեռագիրը.

Սենոդի միջնորդությունը, որ Եւրոպայի և Ամերիկայի հայ թեմերը ճանաչվեն և նրանք ևս մասնակցին ամենայն հայոց կաթողիկոսի ընտրության առանձին պատգամաւորներով, ներքին գործերի մինիստրության կողմից մերժված է։

Պետերբուրգ, 25 սեպտեմբերի

Բալկանեան վերջին դէպքերի առիթով «Россія» կիսապաշտօնական թերթը առաջնորդող յոդուածում ասում է.

«Բոսնիան և Հերցեգովինան Աւստրո-Ունգարիայի իշխանությանը միացնելու աւստրո-ունգարական կառավարության վճիռը, Նոր-Բազարի սանջակից իր զօրքերը դուրս տանելու հետ միասին, ինչպէս նաև Տիրնովոյում Բոլգարիան անկախ յայտարարելը, ինքնին խոշոր խախտումներ են 1878 թ. Բերլինեան դաշնագրության որոշումների, որ ստորագրել են եօթ մեծ պետությունները։

«Թէև Բերլինեան դաշնագրությունը պարունակում է ոչ սակաւ որոշումներ, որոնք ծանրակշիռ են Ռուսաստանի համար, ինչպէս և անպայման ժամանակաւոր անցողական հատաձայնությունների նշանակություն ունեն, սակայն ռուս կառավարությունը չէ կանխեց դաշնագրությունը փոխելու հարցը յարուցելու, ամբողջովին հոգ տանելով հաշտություն պահպանել և զգուշավարվել միջազգային յարաբերությունների հիմնական սկզբունքով, որպիսին հաստատվել է 1871 թ. Լոնդոնի կոնվենցիայով, որի ոյժով պայմանագիրը կարող է փոխվել ոչ այլ

կերպ, բայց եթէ ստորագրած պետութիւնների ընդհանուր համաձայնութեամբ։

«Այնուամենայնիւ Ռուսաստանը իրան կոչված կը համարէ՝ պաշտպանելու բերլինեան դաշնագրութեան անձեռնմխելիութիւնը. բայց նա պէտք է իր ձայնը բարձրացնէ այն դէպքերի վերաբերեալ բոպէին, որոնք ոչ միայն շօշափում են նրա քաղաքական գործունէութեան օրինական շրջանը, այլ և ըստ էութեան փոփոխում են միջազգային յարաբերութիւնների իրական կացութիւնը։

«Բալկանեան քրիստոնեաներին նոր կեանքի կոչելու գործի համար այնքան արիւն թափելով և իր վրա վերցնելով այդ գործը կարգի դնելու շատ և շատ աշխատութիւն, Ռուսաստանը, բոլգարական թագաւորութեան վերականգման մէջ չէ կարող չը տեսնել պատմական գործի ցանկալի իրագործումը՝ իրրև հէնց իր աշխատանքների ժառանգութիւն։

«Այդ դէպքը Բոլգարիայի կեանքում կարիք ունը ոչակայն օրինաչափ ճանաչողութեան, և անհրաժեշտ է, որպէսզի բոլոր այն փոփոխութիւնները, որոնք կարող են մտնել Բալկանի գոյութիւն ունեցող պետական կազմի մէջ, իրանց արգասիք՝ ցնցումներ և միջազգային բարդութիւններ չունենան։ Սմենարնական ճանապարհ այդ նպատակին հասնելու համար, թւում է, հանդիսանում է նոր կոնֆերենցիա գումարելը։ Լիակատար հիմք կայ կարծելու, որ մեծ պետութիւնների մէջ ցանկութիւն կայ համաձայնեցնել իրանց շահերը։

«Նոր կոնֆերանս հրաւիրելը անկասկած լաւագոյն ապահովութիւն կը լինէր վերականգնելու Բալկանում հաւասարակշռութիւնը և պահպանելու Մերձաւոր Արևելքում արդարադատութիւնը և հաստատուն խաղաղութիւնը»։

(«Հ. Գ.»)

—

Բէլգրադ, 25 սեպտեմբերի

Սկուպշչինան կը գումարվի սեպտեմբերի 29-ին։

Բոսնիայում տեղի ունեցած փոփոխութիւնների տեղեկութիւնը ամենախոր ապաւորութիւն թողեց։ Ազգաբնակութեան մեծ մասի տրամադրութիւնը վերին աստիճանի յուզալից է։ Ինչպէս բոլոր կուսակցութիւնների քաղաքականութեան ղեկավարները, այնպէս և լրագիրները միաձայն գովում են Բոսնիայի և Հերցեգովինայի սերբ ազգաբնակութեան հանդէս գալը և Աւստրօ-Ունգարիայի եռանդուն դիմադրութիւնը, որպէս զի դրանով առաջ բերեն Եւրոպայի միջամտութիւնը։ Կառավարական շրջաններում յայտնում են, որ սկուպշչինայի շաբաթ օրվայ նիստը բոլոր հարցերը վերջնականապէս կը լուծէ։

Բերլինեան դաշնագրութիւնը ստորագրող պետութիւններին ուղղված նոտայի մէջ սերբ կառավարութիւնը բողոք է յայտնում Բոսնիայի և Հերցեգովինայի ձուլման դէմ։ Յենվելով դաշնագրութեան 25-րդ յօդուածի վրա, նոտան մատնանշում է, որ Սերբիայի իրաւունքները Բերլինի կոնգրէսում բաւարարութիւն ստացան շատ քիչ չափով, համեմատած Սերբիայի և Շերնօգորիայի զոհերի հետ։ Սերբիան իր պարտականութիւնները կատարեց ազնիւ բարեխղճօրէն, քան որևիցէ ուրիշը. ոչ մի փոփոխութիւն դաշնագրութեան մէջ յօգուտ սերբերի չեղաւ. սերբ կառավարութիւնը յոյս ունի, որ արդարադատութեան ու պաշտպանութեան խնդիրը արձագանք կը գտնի Եւրոպայում։ Նա կարող է բաւարարութիւն ստանալ միայն նրա դրութիւնը վերականգնելով Բոսնիայի վերաբերութեամբ, հակառակ դէպքում նա պարտաւորում է համապատասխան վարձատրութիւն, ինքնուրոյն պետական վանքի ելաշխատութիւն և վերականգնումն ազգային անկախ գոյութեան պայմանների ամենապակասը այն չափով, ինչպիսին այդ արվեց բերլինեան դաշնագրութեամբ։

(«Հ. Գ.»)

—

Շեռինէ, 25 սեպտեմբերի

Կառավարութիւնը մեծ պետութիւններին ուղարկեց մի նոտա, որի մէջ Բոսնիայի միացումը նկատվում է իբրև բերլինեան դաշնագրութեան խախտում։ Նոտան յարակցում է, որ եթէ մեծ պետութիւնները ընդունում են միացումը, այն դէպքում Շերնօգորիան իրան ազատ կը համարէ այն բոլոր պարտականութիւններից, որոնք դրված են նրա վրա դաշնագրութեամբ, առանձնապէս 29-րդ յօդուածով։

(«Հ. Գ.»)

—

Լոնդոն, 25 սեպտեմբերի

«Times»-ը իր առաջնորդող յօդուածում կոմիտէին ողջունում է Իզվոլսկու առաջնակարգ այցելութիւնը Անգլիա։— «Անկասկած է,—ասում է լրագիրը, որ նա գալիս է Դրէյի հետ կոնֆերենցիայի մասին խորհելու նպատակով։ Մենք ողջունում ենք, որ ռուսաց կառավարութիւնը յետաձգեց իր նոտան մինչև այդ այցելութիւնը։ Նախ քան մեր մասնակցութիւնը, մենք կը պնդենք, որ փոփոխութեան ենթարկվեն բերլինեան դաշնագրութեան մի քանի կէտերը, այն մտքով, որ Թիւրքիայի շահերը լիակատար կերպով ուշադրութեան առնվեն»։ («Հ. Գ.»)

—

Լոնդոն, 25 սեպտեմբերի

Արտաքին գործերի ստատս-սեկրէտար Դրէյը Նօրդումբերլանդում, Վուլէրում ճառ արտասանեց, որով կանգ առաւ Մերձաւոր Արևելքի ճգնաժամի վրա։

«Մենք չենք կարող,—ասաց նա,—իրական համարել բերլինեան դաշնագրութեան փոփոխութիւնը, մինչև որ չանվի միւս պետութիւնների համաձայնութիւնը. իսկ ներկայ դէպքում մեծ նշանակութիւն ունի Թիւրքիայի կարծիքը։ Եթէ արտաքին քաղաքականութեան մէջ կը հաստատվի պրակտիկա, այն ժամանակ իւրաքանչիւր առանձին պետութիւն կարող է իր ցանկութեան համաձայն խստագոյնս խախտել միջազգային պայմանագրերը, զրանով և կը վտանգվի հասարակական կարծիքը դէպի այդ պայմանագրերը։ Այն ժամանակ մենք չէինք էլ սպասի սպառազինման կրճատման։ Ամեն մի արհամարհանք դէպի Թիւրքիայի նոր ըէժիմը կարող է պատերազմական բընաւորութիւն տալ այն շարժման, որը ներկայումս կրում է խաղաղ բնոյթ։ Գործնական այն փոփոխութիւնը, որ կատարվեց Բոլգարիայում, աննշան է, որովհետև գործնական տեսակէտից աւտօնոմիայի և անկախութեան տարբերութիւնը արդէն այսքան էլ մեծ չէ»։

(«Հ. Գ.»)

—

Կեօլն, 25 սեպտ.

«Köln. zeit.»-ը յայտնում է, որ Աւստրօ Ունգարիան Բոսնիայի միացումը ընդունեց առանց զրգռման Գերմանիայի կողմից։ Ինչ վերաբերում է կոնգրէս գումարելուն, լրագիրը պնդում է, որ Գերմանիան ոչ մի սկզբունքային հայեացք չի առաջադրի նրա մէջ մասնակցելու դէմ, սակայն լրագիրը կարծում է, որ կարելի է լուրջ առարկութիւններ անել հարցը կոնգրէսում լուծելու մտքի դէմ։ («Հ. Գ.»)

—

Վիէննա, 25 սեպտ.

«Cor. Bur.»-ին հաղորդում են Սերբէվից, որ շարունակ հանդէսներ են տեղի ունենում Աւստրիային միացվելու առիթով։

(«Հ. Գ.»)

—

Լոնդոն, 25 սեպտ.

Բէյտէրի գործակալութեան տեղեկութիւնների համաձայն, այժմեան դիպլոմատիական դրութեան ժամանակ մերձաւոր միջոց կը հանդիսանայ ռուսաց կառավարութեան նոտան, ուղղված բերլինեան դաշնագրութիւնը ստորագրած պետութիւններին, որով առաջարկվում է նոր կոնֆերանս գումարել առաջացած նոր դրութիւնը քննելու համար։ Կարելի է միանգամայն հաւանական ընդունել, որ մեծ պետութիւնները, առաջքան ռուսաց կառավարութեան առաջարկութիւն ընդունելը, ճշգրիտ կորոշեն վիճաբանութիւնների սահմանները և այն ծրագիրը, որպիսին ունենալու են կոնֆերենցիայում։ Այդպիսի դէպքում չը պէտք էր վախենալ այն անակնկալներից, որոնք գուցէ ապարէզ կը գան կոնֆերենցիայում։

Լոնդոնի պաշտօնական շրջաններում հաւատացնում են, որ նոտայով դիմում անելը տեղի կունենայ մօտիկ ապագայում։ Նրա բովանդակութիւնը ընդհանուր գծերով յայտնի է բրիտանական կառավարութեան։ Նրանով առաջարկվում է սահմանափակել կոնֆերենցիայի քննութիւնը այն հարցերով, որոնք անմիջականապէս բղխում են Աւստրօ Ունգարիայի և Բոլգարիայի վերջին պատահարներից։ («Հ. Գ.»)

—

Ցեռինէ, 25 սեպտեմբերի

Իշխանը մի կոչ ուղղեց ժողովրդին, վերտակցութիւն յայտնելով Բոսնիան և Հերցեգովինան յափշտակութեամբ գրաւելու առիթով և շեշտելով, որ վերջնական յաղթանակը ճշմարտութիւնն է, իշխանը խորհուրդ է տալիս չերնօգորցիներին լինել ժուր, ինչպէս Չերնօգորիայի քարաժայռերը, յուսալով որ սերբական ազատ երկիրների այժմեան ցաւալի դրութիւնը անցողական է, որ նրանց համար էլ լաւ օրեր կը հասնեն։

Վերջում իշխանը յոյս է յայտնում, որ մեծ պետութիւնները կը հաւանեն նրա գործելակերպը, և դիմում է չերնօգորցիներին, խնդրելով աջակցել իրան, ինչպէս հէն ժամանակները։ («Հ. Գ.»)

—

Ցեռինէ, 25 սեպտեմբերի

Տեղի ունեցաւ մի հսկայական միտինգ, ուր ընդունվեց մի վճիռ, որով առաջարկվում է կառավարութեան ժողովել իրան պատճառած վիրաւորանքները և Սերբիայի հետ միասին դուրս գալ պաշտպանելու սերբ ժողովուրդների շահերը։

Ռուսաց միսսիայի պալատի առջև նոյնպէս ցոյցեր տեղի ունեցան։ («Հ. Գ.»)

—

Պարիզ, 25 սեպտեմբերի

Թիւրքական դեսպան Նաում փաշան Պիշոնին յանձնեց Բ. Դրան հրահանգիչ նոտան, որով բողոք է յայտնվում Բոլգարիայում անկախութիւն յայտարարելու դէմ։ Նոտայում մատնանշվում է, որ Բ. Դուռը կարող էր ոյժի դիմել, որպէսզի ստիպէր յարգել իր իրաւունքները, սակայն ցանկանում է խուսափել դրանից՝ դէպի դաշնագրութիւնը ունեցած յարգանքից. սուլթանը զրկանապէս յենվում է մեծ պետութիւնների վրա, որոնք համապատասխան միջոցներ ձեռք կառնեն, օրինակ կը գումարեն կոնֆերէնցիա։ («Հ. Գ.»)

—

Լոնդոն, 25 սեպտեմբերի

Պրեմիէր մինիստր Ասքվիթը սեպտեմբերի 23-ի երեկոյեան ճառ արտասանեց Լիվինիում, որով մատնանիշ արեց դրական կերպով, որ Անգլիան մտադիր է պաշտպանել Թիւրքական սրիտասարդ սահմանադրութիւնը նախ ազդուշացնելով Բոլգարիային և Աւստրօ Ունգարիային, որ նրանք իրաւունք չունեն խախտել բերլինեան դաշնագրութիւնը առանց մեծ պետութիւնների համաձայնութեան։ («Հ. Գ.»)

—

Բուդապեշտ, 25 սեպտեմբերի

Բացվեց պատգամաւորութիւնների նստաշրջանը։ Անգլիական պատգամաւորութիւնը նախագահ ընտրեց Մադէյսկուն, ունգարականը—Թէօդոր Զիչիին։ Մադէյսկին հայրենասիրական գոհունակութիւն յայտնեց կայսերական մանիֆէստի առիթով, որ ուղղված է Բոսնիային և Հերցեգովինային։ Մի քանի անգամ պատգամաւորութիւնները նախագահներին կրկնել տուին ի պատիւ թագաւորի և կայսրի, յայտնած բարեմաղթութիւնը։ Միացեալ կառավարութիւնը պատգամաւորութիւնների քննութեանն առաջարկեց 1909 թ. բիւջէն («Հ. Գ.»)

—

Բուդապեշտ, 25 սեպտեմբերի

Ընդունելով պատգամաւորութիւնների անդամներին, կայսրը, պատասխանելով պատգամաւորութիւնների նախագահների ողջոյնի ճառերին, ասաց.

«Դէպի ինձ տածած ձեր հաւատարիմ զգացմունքները լիապէս գոհունակութիւն և անկեղծ երախտագիտութիւն են պատճառում։ Պատգամաւորութիւնների գումարումն այս անգամ զուգորդվում է մի դէպքի հետ, որպիսին ամրապնդում է միապետի այժմեան տիրապետութիւնները և անքակտելի դարձնում 30 ձիգ տարիներ Բոսնիան և Հերցեգովինան միապետի հետ միացնող կապերը։

«Իմ կառավարութեան անսասան և ողջամիտ աշխատանքները այդ երկիրներում ստեղծեցին նոյնօրինակ կուլտուրական վեհ ու բարձր զարգացում, որ ազգաբնակութիւնը այսուհետև շահաւէտ կերպով թեքված է մասնակցելու տեղական կառավարութեան մէջ։ Ներկայումս հնարաւոր է ձեռնարկել սահմանադրութեան համապատասխան պահանջի մուծման։ Վերջինս իրագործելի է սոսկ երկու երկիրների գործնական կարողութեան համապատասխան աներկդիմի, պարզ իրաւական դրութիւն ստեղծելով։ Սոսկ այն ժամանակ այժմեան պայմաններում, այնտեղ կարելի է երաշխաւորել այն հաստատ կացութիւնը, որի մէջ շահագրգռված է հանուր Եւրոպան։

«Նօվօ Բազարի սանջակից իմ զօրքերին դուրս բերելը ապացուցանում է, որ մենք բնաւ տերրիտօրիալ գրաւումների չենք ձգտում... (եղծված)։ Պէտք է յուսալ, որ այդ գործելակերպը բարեկամաբար կը դնահատվի Կ. Պոլսում։

«Թիւրքիայի գործերի յետագայ զարգացմանը, արժատական փոփոխութիւնից յետոյ, մենք կը հետևենք լաւագոյն ցանկութիւններով՝ տեսնել այդ պետութիւնը հաստատուն և ուժեղ, և որ խաղաղվել են այն շրջանները, որոնք վերջին տարիներս յուզմունքներով լի էին։ Բոլոր մեծ պետութիւնները համակված են խաղաղասիրական մտադրութիւններով և ձգտում են փոխադարձ համաձայնութիւններով մեղմացնել և հեռացնել այն դժուարութիւնները, որոնցից համայն եւրոպական դրութիւնը մինչև օրս լիովին չէ ազատվել։

«Մեր դաշնակցութիւնները Գերմանիայի և Իտալիայի հետ և բաշխեկամական յարաբերութիւնները միւս պետութիւնների հետ Աւստրօ Ունգարիային հնարաւորութիւն են տալիս առանձնապէս աջակցել խաղաղութիւնը պահպանելուն։ Այդ խնդիրը, որին համապատասխանում է միապետի դրութիւնը Եւրոպայում և նրա աւանդութիւնները, Աւստրօ-Ունգարիան կարող կը լինի պատշաճապէս կատարել միայն այն ժամանակ, երբ նա հզօր է և պատրաստված։

«Ցուսալով, որ դուք հէնց այդ ոգով կը քննէք իմ կառավարութեան պահանջները, որոնք առաձնապէս վերաբերում են իմ զինուորական—ծովային ու ցամաքային—ոյժերի զարգացմանը, որ ձեզ կը ղեկավարէ ընդհանուր հայրենասիրութիւնը ու անձնազոհութիւնը, ես ձեզ սրտագին ողջունում եմ»։ («Հ. Գ.»)

—

Վիէննա, 25 սեպտեմբերի

Լրագիրներից մինը հրատարակել է կայսրի հրամանը։ Կայսրը այդ հրամանով պատուիրագրում է, որպէսզի Բոսնիայի և Հերցեգովինայի բնիկ պահեստի զինուորները այսուհետև երդվեն աւստրօ-ունգարական զօրքում հաստատված կարգով և բոսնիա-հերցեգովինական զօրքերը այսուհետև կոչվեն կայսերական թագաւորական։

(«Հ. Գ.»)

—

Պարիզ, 25 սեպտեմբերի

Մինիստրների խորհրդի նիստը մեծ-վեզիրի նախագահութեամբ նուիրված էր պատասխան նոտա կազմելուն՝ Բոսնիայի միացման նոտայի դէմ, որ յանձնեց աւստրօ-ունգարական դեսպանը։

Ատելութիւն արտայայտելով դէպի Աւստրիան, Թիւրքական լրագիրները շնորհակալութիւն են յայտնում Անգլիային, Ֆրանսիային և Ռուսաստանին առ Թիւրքիան ունեցած արդարացի վերաբերմունքի համար, ողջունում են մեծ պետութիւնների կոնֆերէնցիայի նախագիծը, խօսում են պատերազմի հակառակ։

Կրետէն միացնելու լուրը դժգոհութիւն յարուցեց յոյների դէմ, թէև այստեղ յոյս ունեն, որ յունական կառավարութիւնը կը մերժէ կատարել կրետացիների պահանջները։

(«Հ. Գ.»)

—

Սոֆիա, 25 սեպտեմբերի

Բոլգարական կառավարութիւնը օտարազգի պետութիւնների իր դիպլոմատական ներկայացուցիչներին ուղարկեց պաշտօնական հաղորդագրութիւն՝ Բոլգարիան թագաւորութիւն յայտարարելու մասին։ («Հ. Գ.»)

—

Կ. Պոլիս, 25 սեպտեմբերի

Երեք պատերազմական նաւերը ուղարկվեցին Արշիպէլագոս։ («Հ. Գ.»)

—

Սոֆիա, 25 սեպտեմբերի

Այսօր առաւօտեան Մարսէյլեան դաշտում մաղթանք կատարվեց, որից յետոյ զօրքերի հրամանատարը զօրքերի առաջ կարդաց թագաւորական մանիֆէստը։ Ապա տեղի ունեցաւ զօրքերի դիտում։ Քաղաք վերադառնալիս զօրքերը շարէ շար կանգնեցին պալատի բակում և օվացիա սարքեցին պատշգամբում գտնվող իշխանուհուն և երեխաներին։ Ազգաբնակութիւնը խանդավառ ողջունում էր զօրքին։ («Հ. Գ.»)

—

Պոլտավա, 25 սեպտեմբերի

Սեպտ. 22-ին Վօլկովէց գիւղում անյայտ շարագործներ, կողոպտելու նպատակով մորթել են մի կողակի, նրա որդուն, որդու կնոջը և վեց երեխաներին։ Դաղանները այրել են նաև խրճիթը։ («Հ. Գ.»)

—

Սէվաստոպոլ, 25 սեպտեմբերի

Մի քաղաքացու բնակարանում գտնվեցին մեծ տեսակի ռումբ, պայթուցիկ նիւթեր, մեծ քանակութեամբ անլէգալ գրքուոյքներ, թղթեր։ Ձերբակալված են չորս հոգի։ («Հ. Գ.»)

—

Տուլա, 25 սեպտեմբերի

Ցերեկվայ ժամը 4-ին երեք բանտարկեալներ, խլելով բանտապետից ատրճանակը և փամփուշտները, կապեցին նրան և փակեցին սենեակում, յետոյ միանալով ուրիշ 3 բանտարկեալների հետ, փորձ արին փախչել, և ստարվեցին սպանել միւս բերդապահին։ Զինուորները վրա հասնելով սպանեցին նրանցից մէկին, իսկ միւս հնգին էլ, փակելով սենեակում, նոյնպէս սպանեցին, որովհետև սրանք չը կամեցան անձնատուր լինել։ («Հ. Գ.»)

—

Պետերբուրգ, 25 սեպտեմբերի

Համալսարանի պրոֆեսորների խորհուրդը այսօրվայ նիստում որոշեց դասախօսութիւնները վերսկսել սեպտեմբերի 27-ին։

(«Հ. Գ.»)

—

Մոսկվա, 25 սեպտեմբերի

Դատաստանական պալատում սկսվեց յեղափոխական մաքսիմալիստների մեծաղղորդ գործի քննութիւնը, որի համար դատապարտեն են յանձնված 80-ից աւելի մարդ։ Գործը կը տևէ մօտ մի ամիս։ («Հ. Գ.»)

—

«Каспій» թերթի թղթակիցը Պետերբուրգից հեռագրում է.

«Աշակողմեան պատգամաւորների մի խումբ շնորհաւորական հեռագիր ուղարկեց Շվարցին, իբրև իսկական ռուսական գործի պաշտպանի։

«Վասիլէվսկի կղզում գտնվեց սոցիալ-դեմօկրատական կենտրոնական կոմիտէի տպարանը։

«Պրոֆեսորների խորհուրդը իր արտակարգ նիստում, չը կատարելով համալսարանը բանալու պատուէրը, տեղեկագրեց ժողովուրդների լուսաւորութեան մինիստր Նիվարցին այդ միջոցի վերին աստիճանի անյարմարութեան մասին։

«Новое Время» ի թղթակցին Շվարցը յայտնել է, որ պրոֆեսորների և ուսանողների որոշումները ոչ մի նշանակութիւն չունեն կառավարութեան տակտիկայի համար։

«Միութեան և առաջադիմութեան» կենտրոնական կոմիտէը Պետերբուրգի լրագիրների խմբագրութիւններին մի հեռագիր է ուղարկել, որով բողոքում է Աւստրիայի և Բոլգարիայի վարմունքի դէմ։

«Новое Время»-ն բալկանեան դէպքերի առիթով ասում է, որ Թիւրքիան պէտք է հաշտվէ Բոլգարիայի անկախութեան հետ, սակայն Աւստրիան պէտք է դիմադրէ, որի համար կարիանայ եւրոպական պետութիւնների համակրութեան։ «Բեկն»-ը Բոլգարիայի գործողութիւնները գտնում է անզգոյշ։

«Վիէննայից գրում են, որ մօտ օրերս Չերնօգորիայում տեղի կունենայ ընդհանուր ժողովրդական։

«Կ. Պոլսից հաղորդում են, որ Քեամիլ-փաշան անընդհատ խորհրդակցում է «Միութեան և առաջադիմութեան» կոմիտէի անդամների հետ։

«Ցունական դեսպանը, ինչպէս ասում են, յայտնել է Քեամիլ-փաշային, որ պատերազմի դէպքում Ցունաստանը կաջակցէ Թիւրքիային։

«Աւստրիական դեսպանը յայտնել է արտաքին գործերի մինիստրին, որ Աւստրիան դատապարտում է Բոլգարիայի գործելակերպը և պատրաստ է պաշտպանել Թիւրքական բողոքը։

«Բէլգրադից տեղեկութիւններ են ստացվել, որ 20,000 սերբական պահեստի զինուորներ իբր թէ դիմում են դէպի աւստրիական սահմանագիծը»։

ԹԻՒՐՔԻԱՅԻ ՊԱՏԵՐԱԶՄԱԿԱՆ ՊԱՏՐԱՍՏՈՒԹԻՒՆՆԵՐԸ

—

Թիւրքիայի զինուորական մինիստրը ժուրնալիստներից մէկին ասաց, որ նա ուղարկեց է Ադրիանուպոլիս զօրքեր և ռազմամթերքներ։ Մինիստրը սակայն ասաց, որ Ադրիանուպոլսում և Սալոնիկում կենտրօնացած ոչ 2-րդ և ոչ էլ 3-րդ զօրամասերում ըստ պատշաճի միջոցներ չեն ձեռք առնված Բոլգարիայի դէմ։

—

Երիտասարդ թիւրքերի երկիւղները.—Կ. Պոլսից «Бирж. Вѣд.» լրագրին հեռագրում են. «Անհանգիստ տրամադրութիւն է տիրում երիտասարդ-թիւրքերի շրջաններում։ Ճնշող ապաւորութիւն են գործում Սոֆիայից ոստացվող լուրերը բոլգարական զօրքերի ցոյցի բնաւորութիւն ունեցող զօրախաղերի մասին։ Երիտասարդ թիւրքերի կուսակցութիւնների բոլոր օրգանները յորդորում են բոլգարներին խոհեմ լինել, վճռականապէս յայտնելով որ անկախութիւն յայտարարելու դէպքում թիւրք ազատ ժողովուրդը մահվան և կեանքի կռիւ կը մղէ։

—

Թիւրքիայի հասարակական աշխատանքների մինիստրի յայտարարութիւնը.—Կ. Պոլսից հեռագրով հաղորդում են հասարակական աշխատանքների մինիստր Գաբրիէլ էֆէնդի Նորատունկեանի հետևեալ յայտարարութիւնը. «Մեր յարաբերութիւնները Բոլգարիայի հետ կորբէկտ են։ Որովհետև Բոլգարիան սահմանադրական պետութիւն է և չէ կարելի թոյլատրել, որ կառավարութեանը աջողվէր պնդել մի ինչ-որ անհասկանալի և անկանոն բանի վրա, ուստի յոյս ունենք, որ երկաթուղական վէճը շուտով կը կարգադրվի։ Արևելեան-ռումելիական գիծը անպատճառ պէտք է վերադարձվի, որովհետև գործադուլը վերջացաւ երկու կողմերի համաձայնութեամբ միջնորդ դատարանով, որի նախագահը ես եմ։ Ներկայումս այդ գծի վաճառումն անհնար է։ Կրկնում եմ, արևելեան գիծը պէտք է վերադարձվի։ Իսկ թէ յետոյ ինչ կը պատահի, դա մեզ համար է ասել այժմ։ Վերին աստիճան ուրախալի է այն, որ պետութիւնները Թիւրքիայի կողմը բռնեցին»։

ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ԿՈՎԿԱՍՈՒ Հ. Բ. ԸՆԿ. ԱՐՏԱԿԱՐԳ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԺՈՂՈՎԸ

—

Զորեքշաբթի, սեպտեմբերի 24-ին, Բօրսայի դահլիճում, երեկոյեան ժամը 8-ին տեղի ունեցաւ Կ. Հ. Բ. ընկերութեան արտակարգ ընդհանուր ժողովը 64 անդամների ներկայութեամբ։

Օրակարգում նշանակված էին. 1) ընդ. ժողովի թոյլատրութիւնը ծախսելու Թիւրքահայ գաղթականների անուամբ եղած 2000 լուրլին՝ նրանց հայրենիք վերադառնալու համար, 2) ընկերութեան միջոցներով նըպաստվելիք դպրոցների ծախսերը և նախահաշիւի հաստատելը, 3) վերատուգիչ յանձնաժողովի երեք անդամների և երկու փոխանդամների ընտրութիւնը, 4) ճիւղերի նախահաշիւների հաստատումը։

Ընդհանուր ժողովի նախագահ ընտրվեց բժշկ. Բ. Նաւասարդեան, իսկ քարտուղար Ս. Եսայեան։

Խորհրդի նախագահ Յարութիւնեան կարդաց ճիւղերի ցուցակը և նրանց նախահաշիւները։

Երևաց, որ ներկայումս ճիւղեր հաստատվել են 35 տեղերում։ Այս 35 ճիւղերից իրանց նախահաշիւները ուղարկել են միայն 11-ը։

Ժողովը լսելով իւրաքանչիւրի նախահաշիւը՝ բոլորն էլ հաստատեց։

Այնուհետև խորհրդի քարտուղարը կարդաց դպրոցական հարցի մասին խորհրդի կազմած զեկուցագիրը։

Այդ զեկուցումով խորհուրդը յայտնում է, որ իր գործունէութեան մի ճիւղն էլ դպրոցական լուրջ խնդիրը համարելով՝ օր առաջ զբաղվել է նրա կազմակերպութեամբ։ Նա հէնց սկզբից խորհրդակցութիւններ է կազմակերպել քաղաքիս և գաւառական դպրոցին մօտ կանգնած ինտելիգենտ անձերից, որոնց տուած նիւթերի հիման վրա՝ կազմեց մի ծրագիր։ Ինչպէս զեկուցումից երևում է, դպրոցական հարցի մասին խորհրդի տեսակետը հետևեալն է։

Ազգային դպրոցը պէտք է ունենայ ազգային բնաւորութիւն, ազգային ոգի։ Դպրոցը պէտք է ունենայ ազգային ուղղութիւն։ Դպրոցը պէտք է ունենայ ազգային ուսուցիչներ։ Դպրոցը պէտք է ունենայ ազգային դասագրքեր։ Դպրոցը պէտք է ունենայ ազգային ուսումնական ծրագիր։ Դպրոցը պէտք է ունենայ ազգային դաստիարակութիւն։ Դպրոցը պէտք է ունենայ ազգային ուսումնական ամենայն միջոցներ։ Դպրոցը պէտք է ունենայ ազգային ուսումնական ամենայն ապարատներ։ Դպրոցը պէտք է ունենայ ազգային ուսումնական ամենայն ուղղութիւն։ Դպրոցը պէտք է ունենայ ազգային ուսումնական ամենայն ոգի

որոշել է առայժմ նպաստել ծխական դպրոցներին, բանալով այդպիսիները նախ և առաջ այնպիսի կենտրոնական վայրերում, որտեղ կամ բոլորովին գոյություն չունեն դպրոցներ և կամ առանց ընկերության նպաստի ստիպված պետք է փակվեն, կամ որտեղ մայրենի լեզուին սպառնում է մոռացության վտանգ, ինչպես Վրաստանում։

Այնուհետև խորհուրդը յայտնում է, որ ընկ. ճիւղերի միջոցով ստացած փաստացի տեղեկությունների վրա հիմնվելով՝ նա համոզվել է, թե ինչպիսի համատարած տգիտության թանձր խաւար է տիրում հայկական վայրերում...

Այսպես օրինակ Հին-Նախիջևանի շրջանը իր 85 գիւղերով և 56,348 հոգի ազգաբնակությամբ ունի միայն 11 ծխ. դպրոց, մի մասը անապահով և փակման վտանգին ենթարկված. Ղազախի գործակալության 1-ին մասը իր քսան գիւղերով ունի միայն 8 դպրոց, որոնցից մի քանիսը հոգեվարքի մեջ են. Կարսի նահանգի 91 հայ գիւղերից 70-ը չունի և ոչ մի դպրոց, իսկ Կաղզուանի շրջանը՝ դպրոցական խնդրի վերաբերությամբ կատարելապես անապատ է։ Գանձակի գաւառը իր 35 գիւղերով ունի միայն 2 ծխական դպրոց, նոյնպես փակման վտանգին մատնված։ Նոր-Բայազետի գաւառը իր 57 գիւղերով և 100,000 ազգաբնակությամբ ունի ընդամենը 8 դպրոց, որոնցից 5-ը պահվում են պ. Ակբիկեանի միջոցներով։ Ալեքսանդրոպոլի հայաշատ շրջանը իր 130,000 հոգի ազգաբնակությամբ ունի 22 դպրոց միայն, որտեղ սովորում են 1580 տղայ և 350 աղջիկ, արական ազգաբնակության 2%-ը, իսկ իգականի ½%-ը։

Այսպիսի դժբաղդ կացությունը դարմանելու նպատակով, խորհուրդը դիմել է հայ հասարակությանը մասնավոր միջոցով, մասնաւոր անձանց, շրջաբերականներ է ուղարկել գաւառները և այլն։ Այդ դիմումների արդիւնաւոր հետևանքը արտայայտվեց պ. պ. Մանթաշեանի ու Ասանովների 20,000-ական ռուբլի նուէրով, որոնց տոկոսիքը միայն պետի գործադրվեն, Պետ. եկ. խորհրդի 3400 ռ. և Գօրու գաւառի Ախալքալաք գիւղի տէր Յովհաննէս Տէր-Գալստեանի նուիրած կալուածքը մօտ 20 հազար ռուբլի արժողությամբ։

Մերժելով բազմաթիւ խնդրագրեր, խորհուրդը իր ունեցած միջոցների չափով որոշել է բաւականանալ 68 հաստատություններին օժանդակելով, տալով պ. Ակբիկեանի 4700 ռուբլու հետ միասին ընդամենը 16,270 ռուբլի նպաստ։

Այնուհետև Յարութիւնեան բացատրեց, թէ ինչ աղբիւրներից պետք է ծածկէ խորհուրդը յիշեալ նպաստը. ա) Պետ. եկ. խորհրդի գումարը 3400 ռ., բ) Անանեանի գումարի տոկոսը՝ 1200 ռ., գ) Բուդաղեանի 10,000 ռուբլու տոկոսը՝ 500 ռ., դ) ընկ. իր կողմից տալիս է 725 ռ., ե) Մանթաշեանի գումարի տոկոսը՝ 950 ռ., զ) բացուեցի Ադամեանը տալիս է 600 ռ., է) Ակբիկեանի գումարները 4700 ռ., ը) մի խումբ անձեր, ի թիս որոնց Ալիբէգեան, պարտաւորվում են տալ 300 ռ.—ընդամենը 13,125 ռուբլի։ Պակասը խորհուրդը յոյս ունի լրացնել մշտական անդամների վճարներից և գուցէ հանդէս գան մասնաւոր անհատներ և այլն։

Յարութիւնեան նկատեց, որ դպրոցական գործը դեռ իր սկզբնաւորության մէջ է։ Ամեն կողմից դիմումներ են ստացվում և այդպիսի պարագային, ընդհանուր ժողովը, հաստատելով նախահաշիւը, իրաւունք կա տարվայ ազատություն պետք է տայ խորհրդին նորանոր դպրոցներ բանալ և զուգընթացաբար նորանոր միջոցներ գտնել։

Կ. Շերբինեան մի անգամ ևս առաջարկում է ժողովին՝ խորհել որքանոց դպրոցը փակելու խնդրի մասին և դրա վրա ծախսված մօտ 7000 ռուբլին աւելացնել դպրոցական գործի համար ծախսվող գումարների վրա։ Եթէ դա անկարելի է այս տարի, գոնէ գալիք տարվանից։

Դր. Վարդանեան շեշտում է մանկավարժական հսկողության կարևորությունը, որ պետք է ունենալ ճիւղերի վրա դպրոցական գործի նկատմամբ, և ցանկալի է գտնում, որ խորհուրդն ուսուցիչներ վարձելիս պայմանաւորվէ ուսուցչական միության հետ։

Ս. Յարութիւնեան պատասխանում է, որ դպրոցների վրա մերձաւոր հսկողությունը խորհուրդը թողնում է տեղական ճիւղերի վրա, որոնց անդամները ինտելիգենտ անձեր են։ Ուսուցչական միության հետ անշուշտ բանակցության մէջ կը մտնի կարևոր դէպքերում։

Խաչիկ և Տ. Յովհաննիսեան ողջունում են այն հանգամանքը, որ խորհուրդը մշտապէս չէ նպաստելու ճիւղերին։ Հարկաւոր է տեղական ժողովրդին սովորեցնել ինքագործունեության, իսկ այդ ճանապարհը հարթում է բարեգործական ընկերությունը իր նպաստներով։ Տ. Յովհաննիսեան կարևոր է գտնում նաև այն, որ խորհուրդը որևէ ճիւղին նպաստ տալիս պայման դնէ, թէ կը տայ դիցուք այս տարի այսքան, երկրորդ տարին՝ այսքան, երրորդ և այլն, իսկ չորրորդ տարուց արդէն ճիւղն ինքը պետք է իր միջոցներով դպրոցը պահէ։

Ա. Նազարեթեան առաջարկում է պարտաւորեցնել ճիւղերին ամեն տարի վիճակագրական տեղեկություններ ուղարկել խորհրդին։

Հ. Առաքելեան մատնանշում է, որ բ. ընկ. պետք է խուսափի որևէ դպրոցի նպաստ տալուց այն դէպքում, երբ նոյն դպրոցին նպաստում է և Բագուի Հ. Կուլտուրական Միությունը։

Ղ. Աղայեան կողմնակից է, որ երկուսն էլ օգնեն։

Այս խօսակցություններից յետոյ ընդհանուր ժողովը, նախագահի բանաձևությունը լսելով, հաստատում է նախահաշիւը։

Դրանից յետոյ քննության խնդիր դարձաւ Թիւրքահայերի 2000 ռ. գործադրության առաջարկությունը։

Ս. Յարութիւնեան յայտնեց, որ սահմանագրությունից յետոյ հայրենիք վերադառնալ ցանկացող Թիւրքահայերի թիւը ամենուրեք օրէ օր աճում է։ Բարեգործ. ընկ. խորհուրդը, նկատի առնելով որ Թիւրքահայերի ժողովում ընտրված բիւրօն մինչև օրս չը հաստատվեց կառավարությունից, վճռել է իր վրա վերցնել գաղթադարձի գործը, կազմակերպելով այդ՝ հասարակության նիւթական և բարոյական աջակցությամբ։ Ներկայումս կանխիկ դրամ կայ 2300 ռուբլի այն գումարներից (50 հազար), որ Թալլիցինի ժամանակ ժողովվեց Թիւրքահայ գաղթականների համար։ Փոխարքան 1906 թ. այդ գումարների մնացորդից 8000 ռ. ուղարկեց ռ. ընկերության, իսկ մի գումար էլ էջմիածին, Մեսրոպ վարդապետին։ (Այս բոլորը աւելի մանրամասն պարզեց պ. Տ. Յովհաննիսեան)։ Բ. ընկ. յիշեալ 8000 ռուբլու մի մասը ծախսել է Թիւրքահայ գաղթականների վրա, իսկ մնացորդ մօտ 3000 ռուբլու տոկոսներով, ընդհ. ժողովներից մինի հաւանությամբ, պահում է 3 Թիւրքահայ որբեր։

Ներկայումս, պահելով այդ նպատակով 800 ռուբլի, խորհուրդը առաջարկում է գործադրել այժմ 2000 ռուբլին։

Մտքերի փոխանակությունն սկսվեց գլխաւորապէս գաղթականների վերադարձնելու գործը կազմակերպելու և նրա մասնաւորությունների շուրջը։ Բան որում ընդգծվեց այն հանգամանքը, որ գործը ինքնուրույնաբար խոշոր գործ է, պետք է ամեն մարդ լայն աջակցություն ցոյց տայ թէ նիւթական և թէ բարոյական տեսակէտից և այլն։

Գլխաւորաբար՝ միջոցներ գտնելու խնդրի շուրջը եղան երկար խօսակցություններ։

Կ. Շերբինեան առաջարկեց, իբրև մի միջոց, պահանջել այն խմբագրություններից, որոնք դրամներ ժողովեցին հայրենիքեան ֆոնդի անունով, յանձնել այդ դրամները այժմ վերադարձի համար գործադրելու նպատակով։

Խաչիկ առաջարկում է խնդրել Կենտրոնական Նպաստամատույց Յանձնաժողովից՝ յանձնել իր ձեռքի տակ մնացած փողերը։

Այս առաջարկությունների շուրջը սկսվեց աղմկալի վիճաբանություն։ Ոմանք նկատեցին, որ այդպիսի խնդիրներ անյարմար է յարուցել, որովհետև դրանք յատուկ նպատակով են դրված։

Ա. Եղեկեան յիշեցնում է էջմիածնում գտնվող 17,000 ռուբլու մասին, որ մնացել է ալաշկերտցի գաղթականների համար ժողովված գումարներից։

Ի վերջոյ ընդհանուր ժողովը, իրաւունք տալով ծախսել 2000 ռուբլին, յանձնեց խորհրդին դիմումն անել Կենտ. Նպաս. Յանձնաժողովին և խնդրել մի գումար յատկացնել Թիւրքահայերի համար, իսկ էջմիածնից պահանջ դնել յանձնել ալաշկերտցիների գումարի մնացորդը։

Վերջում տեղի ունեցան վերաստ. յանձնաժողովի 3 անդամի և 2 փոխ-անդամի ընտրությունները։

Դաղտնի քուէարկությամբ տուփերով ընտրվեցին պ. պ. Ս. Շահվերդեան 42 սպիտակ (7 սև), Ա. Եղեկեան 40 սպիտակ, Ս. Խարազեան 39 սպիտակ, Ա. Նազարեթեան 36 սպիտակ և Կ. Բաբայեան 30 սպիտակ։

Ժողովը փակվեց գիշերվայ ժամը 11½ ին։

Ե.

ՄԻ ՆՄՈՒՇ

Աստրախանի «Լրաբեր» թերթը հաղորդում է, որ սեպտ. 7-ին այդ քաղաքում կայացած թեմական պատուիրակների ժողովը, ընտրելով թեմական պատգամաւոր պ. Կարապետ Ալաջալեանին, տուեց նրան որոշ մանդատներ, որոնց մէջն կա՝ «ամենայնք գործ դնել խանգարել ռուսահայ եպիսկոպոսների և յատկապէս Սուրէնեան տեղապահի թեկնածությունը, որը յայտնի է ամբողջ Կովկասին իր յետադէմ և ճնապակաց գործունեությամբ»։

Ուշադրությունս արժանի է, որ Սուրէնեանի թեկնածությանը հենց այն թեմերն են հակառակ, ուր նա վարել է առաջնորդի պաշտօն, ինչպես Թիֆլիսի, Շուշու, Երևանի և Աստրախանի թեմերը։ Հետաքրքրական էր, որ այս ուշագրաւ իրողության բացատրությունը տար «Գործ» թերթը, որին յարած յայտնի խմբակը աշխատում է ամեն կերպ հաճոյանալ Սուրէնեանին և մի առանձին քնքշությամբ խնայում է նրան։ Դեռ նորերս նա չը տպեց Ներսիսեան դպրոցի ուսուցչական խմբի հաւաքական նամակը ողջոյ. Մարքի միջադէպի առիթով, պատրուակ բռնելով, թէ փաստը ստուգված չէ, «Մշակը» սուտ է ասում, խոստանալով տպել՝ երբ փաստը կը ստուգվի։ Փաստը ստուգվեց հէնց իր տեղապահ Սուրէնեանի նամակով. վերջինս միայն անհիմն և անընդունելի պատճառներ էր բերում իր տգեղ վարմունքը արդարացնելու համար. սակայն այնուամենայնիւ, «Գործը», հակառակ իր խոստման, չը տպեց ուսուցիչների նամակը։ Դէպի Սուրէնեանը ուղղված քնքշության մի ուրիշ ապացոյցն էլ այն է, որ «Գործը», նկարագրելով Թիֆլիսի թեմի պատուիրակների ժողովը, ուր պատուիրակները ստիպել են պատգամաւորությունի թեկնածու Ս. Յարութիւնեանին յայտնել, թէ նա Սուրէնեանին ձայն չի տայ, և ոչ մի խօսք չէ ասում այդ մասին, այնպէս որ «գործականները» այն քաղցր ինքնախաբէության մէջ կը մնան, որ Թիֆլիսի թեմի պատգամաւոր Յարութիւնեանը քուէ կը տայ իրանց գաղտագողի թեկնածուին։ Եւ Ս. Յարութիւնեանն էլ, ի հարկէ, հոգ չի տանի յայտնել «գործականներին», թէ ինքը սեպտ. 21-ի ժողովում յայտարարել է, որ Սուրէնեանին քուէ չի տայ...

Ով մարդիկ, որքան կեղծիք, որքան բարոյական ֆալշ և անանկութիւն կայ ձեր մէջ։ Այսպէս վարվողները դեռ իրանց ինտելիգենտ մարդիկ են համարում, հասարակական գործիչներ և, որ զարմանալին է, անպատկառություն ունեն յանդիմանելու ուրիշներին։

Հ. Ա.

ԴԱՏԱՍՏԱՆԱԿԱՆ ԴԱՀԼԻՃԻՑ

Սեպտեմբերի 25-ին կովկասեան զինուորական-նահանգական դատարանում քննվեց Միք. Իմբերլիզվիլու գործը (առաջին դատավճիռը գլխաւոր զինուորական դատարանը փոխեց), որ մեղադրվում է Թիֆլիսի մաքսատան վրա ուրիշ անձերի հետ միասին զինված յարձակում գործելու մէջ։

Դատարանը այս անգամ էլ նրան մահվան պատիժ որոշեց։

—

Մենք հաղորդեցինք, որ զինուորական դատարանը մահվան դատապարտեց Կոլէն սկայաներ—մօրը և աղջկան սպանելու համար իսերել Էսատէ Քուտալաձէին։

Այժմ, ինչպես տեղեկացանք, դատապարտվածի պաշտպանը վճռաբեկ բողոքագիր է ներկայացրել զինուորական գլխաւոր դատարանի անունով։

ՏԵՂԵԿՈՒԹԻՒՆՆԵՐ ԳԱՆԱՌԻՑ

(Սեպ. թղթ.)

—

Գանձակ, 24 սեպտ.

Ինչպէս յայտնի է, 1907 թ. օգոստ. 25 ին Գանձակի յաջորդ Կորիւն վարդապետը բանտ նստելով, նրա տեղը թափուր է մնում մինչև օրս, չը նայած որ Կորիւն վարդապետը իր ռոճիկը ամսական 100 ռ.՝ անխափան ստացել է մինչև օրս։

Ներկայումս հոգևոր իշխանության կարգադրությամբ, շուտով լինելու է յաջորդի ընտրություն՝ Կորիւն վարդապետի փոխարէն։

Օգոստոսի 29-ից (հիւանդությունը սկսած օրից) մինչև սեպտեմբերի 20-ը Գանձակում խուլերայից հիւանդացել են ընդամենը 215 հոգի, մեռել են 153 հ., որոնցից 3 ը հայեր են, մնացածները թուրքեր։

Գանձակեցի

ՊԱՐՍԻԿՆԵՐԻ ԳՈՐԾԱԴՈՒԼԸ ԲԱԳԻՈՒՄ

Սեպտեմբերի 23-ին, մինչև ուշ երեկոյ, պատասխան չը ստացվեց այն հեռագրին, որ ուղարկեցին գործաթող պարսկահպատակները. գործաթողները կրկին միտինգ կազմեցին, ուր պարսից հիւպատոսարանի գործակալները ժամանիշ արին գործադուլի աննպատակայարմարության վրա, ընդգծելով որ դրանով պարսից կառավարությանը ոչ մի վնաս չեն կարող հասցնել և պարսից շահի համար միանգամայն միևնոյնն է՝ առնուր կանեն նրանք, արդեօք, Բագուում, թէ ոչ։ Գործակալները հաժողում էին վերջ դնել գործադուլին և սպասել պատասխանի։

Դրանից յետոյ հանդէս եկան մի քանի հռետորներ պարսիկների միջից և ապացուցին, որ Բագուի գործադուլը թէև չէ կարող վնաս պատճառել Պարսկաստանին, բայց դա միակ միջոցն է՝ բողոքելու պարսից կառավարության դէմ այնտեղ տիրող կամայականության առիթով։ Վերջ ի վերջոյ այդ հռետորներն էլ առաջարկեցին գործադուլը վերջացնել մի քանի պայմաններով, որոնք և ընդունվեցին գործաթողների կողմից։

Այդպիսով, վճռվեց գործադուլին վերջ տալ, ընտրել իրանց միջից 10 մարդ, որոնց և յանձնել բանակցություններ վարել առաջադրված պահանջների վերաբերությամբ ինչպես պարսից արտաքին գործերի մինիստրության, այնպէս և տեղական պարսից հիւպատոսարանի հետ։

Սեպտ. 24 ին, մինչև երեկոյ, նոյնպէս պատասխան չը ստացվեց։

Այդ պատճառով բանվորական մասնաժողովը երկրորդ հեռագիրն ուղարկեց, այս անգամ շահի անունով։

Իր կողմից տեղական պարսից հիւպատոսը արտաքին գործերի մինիստրին մի հերթական հեռագիր ուղարկեց՝ խնդրելով որևէ պատասխան ուղարկել, յարակցելով, որ պարսիկները գործադուլը կը վերսկսեն, եթէ պատասխան չը ստանան։ («Կասп.»)

ՅՕԳՈՒՏ Ս. ԹԱՌԱՅԵԱՆԻ

—

Մենք ստացանք Ժընէվում տառապող հայ գրող Ս. Թառայեանի օգտին պ. Ղ. Աղայեանից առաջին նուէրը՝ 10 ռ.։ «Մշակի» խմբագրությունը իր կողմից ևս նուիրելով 15 ռ., անմիջապէս փոխադրեց Ժընէվ 25 ռ.։

Ցոյս ունենք, որ հայ հասարակությունը անտարբեր չի մնայ դէպի մի հայ գրական մշակ։

ԽՕՍԵՐԱ

—

✦ Թիֆլիսում սեպտեմբերի 24-ին հիւանդացան խօլերային նշաններով Յովսէփ Ոսկանեանը Տեմրիւկսկի փողոցում։ Միւս օրը, սեպտեմբերի 25 ին, խօլերային բարակը տարան հիւանդ Տիգրան Ֆօրգիսեանին, 18 տարեկան (6-րդ քաղաքաս, Ախպատի նրբափողոց)։

✦ Սեպտեմբերի 24-ին Թիֆլիսի կենտրոնական պատուաստման տեղում հակախօլերային պատուաստումներ ընդունեցին ընդամենը չորս մարդ։ Միւս տեղերում ընդունող չեղաւ։

✦ Բօրժոմում խօլերային նշաններով հիւանդացել են չորս բանւոր, որոնցից մէկը մեռաւ։

ՆԵՐՔԻՆ ԼՈՒՐԵՐ

—

✦ Կովկասի Փոխարքայի պաշտօնակատար գեներալ Շատիլովը հնարաւոր չէ գտել բաւարարություն տալ Դերբենտի քաղաքային ինքնավարության միջնորդությանը՝ 25,000 ռուբլի տալու Դերբենտ քաղաքին քաղաքային պահեստի գումարներից իբրև փոխառություն։

✦ Այսօր, երեկ. ժամը 7-ին, կովկասագիտական բարձր դասընթացքներում (Ալեքսանդրեան այգի) տեղի կունենայ Բագրատ Խալաթեանի երկրորդ դասախօսությունը Առաջաւոր Ասիայի մասին։ Դասախօսությունը ժամանակ ցոյց կը տրվեն պատկերներ ժողական լապտերներով։ Դասախօսը ունի խօսելու լաւ ձիրք և նրա ունկնդիրները նրան մեծ հաճոյքով են լսում։

✦ Կիրակի, սեպտեմբերի 28-ին, տեղի է ունենալու Թիֆլիսի ժուրնալիստների ժողովը։ Պէտք է նկատել, որ այս ժուրնալիստները նրանք են, որոնք ըմբոստությամբ, առանց գրականագէտների ընդհանուր ժողովի, ինքնագլուխ «ընկերություն» էին կազմել, կանոնադրություն մշակել և մինչև անգամ նահանգապետից հաստատել տուել։ Այդ ինքնակոչների վարմունքը, ինչպէս յայտնի է, խիստ դատապարտվեց գրականագէտների ընդհանուր ժողովում։

✦ Որովհետև ժողովրդական համալսարանի ընկերության ընդհանուր ժողովից ընտրված այն կոմիսիան, որ պէտք է վարչության անդամների հետ միասին աչքի անցնէր կանոնադրության մի քանի փոփոխման կարօտ կէտերը, մշակէր կանոնադրություն սեկցիաների համար և ներկայացներ առաջիկայ հոկտեմբերին կայանալիք ընդհանուր ժողովին ի հաստատություն, բացի մի անդամից, ոչ մի անդամ ժողովի չէ եկել իր պարտաւորությունը կատարելու, այդ պատճառով վարչությունը որոշեց իր կողմից ընտրել 5 հոգի—Բցխելաձէ, Բօղդանովիչ, Զաչինեաև, Կաչուխով և Զիչինաձէ—որոնք հրաւիրելով սեկցիաներից ներկայացուցիչներ՝ միասին պէտք է մշակեն այդ կանոնադրությունները։ Առաջին ժողովը նշանակված է առաջիկայ շաբաթ, երեկոյեան ժ. 8-ին, գիւղատնտեսական տանը։ Հայերէն դասախօսությունների վրա դրված արգելքը վերացվելու մասին երէկ վարչությունը խնդրագրով դիմեց նահանգապետին։

✦ Թէ ինչպէս վատ է քաղաքի ֆինանսական դրությունը, երևում է նրանից, որ քաղաքային վարչությունը ոչ միայն չէ կարողանում իր ժամանակին հատուցանել մանր գումարները, այլ և չէ կարողանում վճարել իր ծառայողների ռոճիկները։ Մինչև օրս ծառայողները չեն ստացել սեպտեմբեր ամսվայ ռոճիկները։

✦ Սեպտեմբերի 24-ին կայացաւ քաղաքային վարչության, դումայական ժողովրդական առողջապահական մասնաժողովի, ճարտարապետների, սանիտարական բժշկական տեսչի և քաղաքային բուժարանների կառավարիչների մասնակցությամբ՝ Արամեանի հիւանդանոցը կահաւորելու և բանալու հարցի համար։ Այդ նիստում ձեռնարկվեց քննելու բժիշկների և միւս ծառայողների թափ և նրանց ռոճիկների ցուցակը։

✦ Մօտ օրերս կը ձեռնարկվի Ներսիսեան դպրոցի նոր շինության կառուցմանը Հալաբարում, Ա. Մանթաշեանի նուիրած փողերով։

✦ Պետերբուրգի հայ եկեղեցու հոգաբարձական խորհուրդը 1000-ական ռուբլի նպաստ է յատկացրել Գլակի ու Վարագի Ախալալաք վանքի դպրոցներին։

✦ Որովհետև հայրենիք վերադարձող Թիւրքահայերից մի քանիսը քաղաքային վարչության մէջ ծառայել են երկար տարիներ, օրինակ 15, 20, 25 տարի, քաղաքային վարչությունը խնդրում է դուռ մայից նպաստ նշանակել այդպիսիներին։

✦ Բանտային վարչության սեպտեմբերի 24-ի նիստում ի միջի այլոց որոշվել է Մետեխի բանտին կից մի հացթխարան բանալ, որտեղից հաց մատակարարվէր թէ Մետեխի բանտին և թէ նահանգական բանտին։

✦ Այս տարի, նորակոչ զինուորներին ընդունելու ժամանակ քննիչ մասնաժողովների մէջ ներկայ կը լինեն Թիֆլիսի գաւառապետի օգնականը՝ Թիֆլիսի քաղաքային զինուորական տեսանում, Թիֆլիսի գաւառական զինուորական կառավարիչը՝ գաւառում, իսկ նահանգական տեսանում կը նշանակվի Թիֆլիսում գտնվող զինուորական կառավարիչներից մէկն ու մէկը։

✦ Երէկ Թիֆլիսի ժողովարանը ամբարային շինությունից տեղափոխվեց ձմերային շինությունը։

✦ Ալէքսէյ Բ'օտ, Նիկոլայ Վարդանեան, Ռոստոմ Մարտիրոսեան, Վարվառէ Եարգուլեան և Մարիա Ջամբակուլ Օրբելեանի տնային գրքերի պարտադիր կանոնները խախտելու համար ենթարկվում են Օրբելեանին և Եարգուլեանը 15-ական ռուբլի, Մարտիրոսեանը 50, Վարդանեանը 20, իսկ Բ'օտը 25 ռուբլի տուգանքի։

✦ Հեծանիւներ սիրողների Թիֆլիսի ընկերությունը խնդրամատոյց է եղել քաղաքային վարչությանը, չը նշանակել 3 ռուբլի տարեկան տուրքը, մինչև որ քաղաքը իր հաշուով գլխաւոր փողոցների երկու կողմերով չը շինէ քառանկիւն քարերից յատուկ արշաւանքի տեղեր։ Այս նոյն խնդրի առիթով, հեծանիւների արհեստանոցատէր Աբրալովը դիմել է քաղաքային վարչությանը, խնդրելով կապալով տալ իրան հեծանիւներ նստողների համար համարներ որոշելը և նրանցից 3 ռուբլի տուրքը՝ առնելը։

✦ Նահանգական ֆաբրիկային վարչությունը, քննելով Թիֆլիսի քաղաքային վարչության բողոքը ֆաբրիկային տեսչի այն կարգադրության դէմ, որ վերաբերում է Աւճալեան ջրանցքի ծառայողներին ֆաբրիկային տեսչությանը ենթարկելուն, գտել է այդ բողոքը հիմնաւոր և փոխել է ֆաբրիկային տեսչի կարգադրությունը։

✦ Անդրկովկասեան երկաթուղիների վարչությունը տեղեկացրել է քաղաքային վարչության, որ նա հրաժարվում է Նաֆթլուղ կայարանը լայնացնելու համար յատկացված 19 դես. հողը գրաւելուց։ Քաղաքային վարչությունը մտադիր է այդ հողերն էլ մաս-մաս բաժանել և կապալով տալ կացարանների համար։

✦ Կովկասեան զօրաբանակի ընդհանուր հրամանատարը, նկատի առնելով վրա հասած ցրտերը, կարգադրություն է արել, որ, իւրաքանչիւր տեղում, տեղական զօրամասի կառավարիչը ձմերային զգեստ կրելու հրաման տայ, իւրաքանչիւրը նկատի առնելով տեղական կլիմայական պայմանները և եղանակի դրությունը։

✦ Մենք ստացանք Թիֆլիսի Կենտրոնական Նպաստամատույց Յանձնաժողովի Բագուի ճիւղի նպ. խառն մասնաժողովի հաստատ հաշիւը, որի մասին կը խօսենք առանձին։

✦ Ստացանք Վերխնէ-Ուդինսկ քաղաքից, պ. Յ. Մէյրամզուլեանից 10 ռուբլի, որ հանգանակվել է յօգուտ Թիւրքահայ գաղթականների, աքսորված Սամարա, փոխարէն պակի, դրվելի հանգուցեալ Մանուկ Երիցեանի դագաղի վրա։ Նուիրատուներն են՝ պ. պ. Յ. Մէյրամզուլեան 2 ռ., Երիցեան 3 ռ., Գ. Փիլիպոսեան 2 ռ., Մ. Երիցեան, Հ. Լաչինեան, Տ. Խաչատրեան 1-ական ռուբլի։

ԼՈՒՐԵՐ ԳԱՆՁԱԿԻՑ

—

✦ Սեպտ. 16 ի երեկոյեան անյայտ մարդիկ, մօտենալով Ա. Սահակեանցի տանը, քաշում են զանգը և պահանջում «գիմնազիստ Արամին», յայտնելով որ հօրից նամակ ունի տանալու։ Արամը դուրս է գալիս փողոց, և նրան բռնի կերպով նստեցնում են կառքը և անյայտացնում։

Մի քանի ժամից յետոյ 14-ամեայ Արամը կեղտ ու մրոտ կորած վերադառնում է տուն և պատմում, որ իրան յափշտակող մարդիկը տարան մի այգի ու բանտարկեցին մի տան մէջ։ Բանտարկեալը մթության մէջ գտնելով մի անցք՝ կարողանում է իրան նետել փողոց և, գլխաւոր ճանապարհից շեղվելով և հազար ու մի նեղությունների, հասնել տուն։ Մութ լինելու և աւազակների դիմակաւորված լինելու պատճառով՝ Արամը անկարող է եղել ճանաչել իրան տանողներին և մինչև անգամ այգին։

Այս առիթով նահանգապետը հրաման է արձակել, տալ իրան բոլոր հայ այգեպանների և այգեպանների նկարները և խիստ պատիժ է նշանակել նրանց, որոնց այգում նոյնանման դէպք երկրորդ անգամ կը կրկնվի։

✦ Քաղ. դպրոցի հայոց լեզուի ուսուցիչ Մ. Ենգիբարեանի ժամանից յետոյ, այդ տեղը վիճակվեց Ս. Տէր-Խաչատրեանին։ Տէր-Խաչատրեանը սեպտ. 20 ին ատանալով ռոճիկը՝ առանց դպրոցի տեսչին յայտնելու քաղաքից հեռանում է։ Պարոնը գտնելով աւելի չաղ պաշտօն, 300 հայ աշակերտի բաղդը կապելով իր գրպանի հետ, վազել է նոր պաշտօնատեղին։

✦ Օգոստոսի 20 ից, որ խօլերայի ըսկիզբն է համարվում, մինչև սեպտ. 16-ը քաղաքիս երկրորդ մասը բոլորովին ազատ էր խօլերայից, բայց 16—20-ը հիւանդացել են 5 հոգի, մեռել են 3-ը։ Պէտք է նկատած որ խօլերայով մեռածները ժամերով անթաղ են մնում, մինչդեռ հարկաւոր է դէպքերի մասին հեռագրել։

եղած միջոցին ամէն ինչ անել, որ հաստատակի բնաւորութիւն չը ստանայ։ Կատարեալ Զաղէթեանը սեռաւ շաբաթ ժամը 12-ին, թաղվեց կիրակի ժամը 11-ին, մեռնելուց ուղիղ 23 ժամ յետոյ։ Նոյնանման չարիքները վերացնելու համար քաղ. սանիտ. քժշ. տեսչի ուշադրութիւն ենք հրաւիրում։

Տղայոց գիմնազիայում սեպտ. 18-ին առաջին և 20-ին երկրորդ խօլերային դէպքն է տեղի ունեցել դասաւանութեան միջոցին։ Հիւանդացածները երկրորդ դասարանի սաներ և աղջիկ թուրք են։ Դպրոցի փարչութիւնը և նահանգապետը այդ առիթով դիմել են Կովկասի ուսումն. շրջանի հոգաբարձուին։ Լսվում է, որ ծնողներից մի քանիսը դիմել են գիմնազիայի դիրեկտորին և խնդրել՝ ուսումը դադարեցնել ժամանակաւորապէս. դիրեկտորը պատասխանել է, որ իրանից չէ կախված այդ հարցը, այլ Կով. ուսումն. շրջ. հոգաբարձուից, որից և սպասվում է կարգադրութիւն։

Գաւառիս լեռնային մասերում տարածվող հայ և թուրք գիւղերում խօլերային ոչ մի դէպք տեղի չէ ունեցել, իսկ Կուր գետի երկարութեամբ ընկած գիւղերում, լսում ենք որ, խօլերան մուք է գործել և հաստատակի բնաւորութիւն է ստացել։ Մոտվում է միմիայն քաղաքի համար, իսկ գիւղերը յանձնված են Աստուծոյ խնամքին։

Սարգս

ՆԱՄԱԿՆԵՐ ԽՄԲԱԳՐՈՒԹԵԱՆ

—

Դիլիջան, 3 յուլիսի *)

«Մշակի» № 133-ում տպված մի թղթակցութեամբ Կ. Թադէոսեան փորձում է արատաւորել իմ աւագ-ուսուցչութեան գործունէութիւնը։

Պ. Կ. Թադէոսեան հաստատակվում է հրապարակ դուրս գալ և ցեխ շռաքել ուրիշի վրա, ստում է ասելով՝ թէ «ուսումնական տարվայ ընթացքում չը ցանկանալով Դիլիջանի դպրոցի անորորութիւնը խանգարել...», տարվայ վերջն է միայն հնարաւորութիւն ունենում հրապարակի վրա դնելու իմ ուսուցչական գործունէութիւնը. բայց ես նրա մեղադրական կէտերին մէկ-մէկ կը պատասխանեմ։

1. Իբրև թէ ես երկու տարվայ աւագ-ուսուցչութեան ընթացքում ունեցել եմ շահատակութիւններ և նրանց քօղարկելու համար չեմ թոյլ տուել, որ արձանագրութիւն լինի, «չը նայելով որ այս ուսումնական տարվայ սկզբին հոգաբ. և ուսուցչ. խումբը անհրաժեշտ համարեցին այդ արձանագրութիւնները»։ Ի՞նչ կը կարծեն ընթերցողները այս տողերից, որ ես մի բրոնակալ և քմահաճ անձնաւորութիւն եմ, կարողանում եմ նոյնիսկ ուսուցչական խմբի և հոգաբարձութեան անհրաժեշտ համարված որոշումը մերժել, իսկ միմիայն՝ որոնց թւում և պ. Թադէոսեան՝ փայատներ, իրաւունքներից զրկված աւելորդ ժարժիններ են նայն**), քաջ լիցի, որ ես թոյլ տամ իմ մասին այդ տեսակ անանխանձելի համոզում կազմելու։

Անցեալ ուսումնական տարվայ գործերի մասին չենք ունեցել պաշտօնական արձանագրութիւններ, չը նայած՝ հէնց առաջին ժողովից այդ հարցն եմ դրել, բայց ուսուցիչներից ոչ ոք յանձն չէ առել գրել անձնական հաւութեան պատճառով. ես իբրև նախագահ ժողովի՝ չէի կարող միաժամանակ և քարտուղարութիւն անել, ստիպված եմ եղել ուսուցչ. ժողովների նիւթ եղող հարցերի որոշումները ինքս գրելու, իսկ թէ ինչ որոշումներ են եղել տարվայ ընթացքում, ինչ գործեր է կատարել ուսուցչական խումբը, այդ բոլորը միասին մանրամասն դուրս եմ բերել իմ զեկուցման մէջ իբրև աւագ ուսուցիչ, որ կարդացել եմ հասարակութեան առաջ տարեկան հանդիսում և ստացել արձանագրութեան մատեանի մէջ։ Հետաքրքրվել էք, պ. Թադ., մի օր այդ մատեանը առնել և կարդալ։

Այդպէս եմ ստիպված եղել ուսուցչական ժողովների գործերը պահել և այս տարի, որովհետև երբ մի քանի անգամ ժողովների հարց եմ դարձրել և առաջարկել, որ 4 ուսուցիչներից ովքեր ձեռնհաս են՝ պէտք է յանձն առնեն հերթով գրելու, առաջինը դուք էք հրաժարվել՝ ձեր պարտքը չը հարմարելով գրելը. դուք՝ որ հայոց լեզուի դասատու էիք՝ հրաժարվեցիք, միւսներն էլ, ի հարկէ, որ այնքան ձեռնհաս չէին՝ բնականաբար պէտք է հրաժարվէին։ Այդ մասին երկու անգամ բողոքել եմ հոգաբարձութեան, որ կամ՝ դրա համար առանձին վարձ նշանակէ կամ առանձնապէս դիմի ձեզ համոզելու, որ, նիւթական միջոցներ չեղած դէպքում, ուսուցիչները պարտաւոր են հերթով կատարել այդ պաշտօնը։ Երբ հոգաբարձութեան դիմումը (առանց վարձի) նորից մերժվում է, ստիպված եմ լինում դարձեալ ժողովների որոշումները ինքս գրել և նրանց գործադրութեան վրա հսկել։ Այնուհետև լսում էք բողոքդ, լսում էք դուք, որ այդքան նախանձախնդիր էք ցոյց տալիս ձեզ դպրոցի շահերին՝ հասարակութեան առաջ։ Հոդաբարձութիւնն էլ հաշվում է իրողութեան հետ, իմ առաջարկած նոր միջոցները չընդունելով։

Յովհ. Զաքարեան

(Կը շարունակվի)

—

Թիֆլիս, 24 սեպտեմբերի

Հանգուցեալ Մուրացանի թաղման կարգադրիչ յանձնաժողովը, ի լրումն ընտրողների կողմից իր վրա դրված պարտականութեան, սրանով հրաւիրում է տաղանդաւոր վիպասանի յիշատակը յարգողներին շնորհ բերել ասիս 27-ին, շաբաթ օրը, երեկոյեան 7 ժամին Զգրաշէնի դպրոցի դահլիճը՝ խորհրդակցելու թէ ինչ եղանակով յաւերժացվի Մուրացանի յիշատակը։

Ընդ սմին կարգադրիչ յանձնաժողովը էր պարտքն է համարում յայտնել հանգուցեալ Միքայէլ Միրզայեանի ժառանգներին իր շնորհակալութիւնը, որ յանձն առան հոգալ Մուրացանի թաղման բոլոր ծախքերը։

Կարգադրիչ յանձնաժողովի՝
Նախագահ՝ բժշկ. Բ. Նաւասարդեան
Քարտուղար Իս. Յարութիւնեան

—

Թիֆլիս, 23 սեպտեմբերի

«Գործ» լրագրի № 10-ի մէջ գրված էր, թէ կաթողիկոսական պատգամաւոր ընտրելու համար «Սև Սանդրօն» դեսուդէն ընկած շատ էր աշխատում պ. Քալանթարի համար, բայց չաջողվեց։

Սխալվում էք, իմ նախկին բարեկամներ. ես միայն աշխատում էի ստիպել ձեզ, որ հրաժարվէք ձեր գաղտնի պահած կաթողիկոսական երկրորդ թեկնածու Սուրէնեանից, և ես հասայ իմ նպատակին։ Քուէարկութիւնից առաջ ես ինքս դիմեցի պ. Ս. Յարութիւնեանին, որ նա ուղղակի յայտնի թէ ով է իր երկրորդ թեկնածուն, ինչպէս «Մշակի» խմբագիրը վաղուց յայտնել էր։ Իմ այդ հարցմունքից յետոյ միայն պ. Ս. Յարութիւնեանը շատ տատանվելուց և ծամծմելուց յետոյ յայտնեց Դուրեանի անունը. և շատերի պահանջելուց յետոյ միայն ասաց, որ ձայն չի տայ ոչ Սուրէնեանին և ոչ Օրմանեանին։

Ինչ վերաբերում է նրա ընտրութեան, նա խօսելու ժամանակ այնպիսի լեզուով և շողոքորթական ոճով էր խօսում և դիմում պատուիրակներին, որ քիչ էր մնում ես էլ փոխանակ նրան սև տալու, սպիտակ տայի, խղճալով նրան։

Սանդրօ

—

Թիֆլիս, 25 սեպտեմբերի

Ամսիս 24-ին, Թիֆլիսի Բօրսայի դահլիճում կայացած Կովկասի հայոց բարեգործական ընկերութեան ընդհանուր ժողովում, երբ քննվում էր Թիւրքահայ գաղթականներին հայրենիք վերադարձնելու խնդիրը, երդուեալ-հաւատարմատար պ. Տ. Յովհաննիսեանը հրապարակօրէն մի շատ հետաքրքրական յայտնութիւն արեց. այն է՝ որ Ներսիսեան դպրոցի հոգաբարձութիւնը նրապատ է տուել հայ-թուրքական ջարդերից փրկված Ղազախի շրջանի հայ գիւղացիներին, որոնք մինչև օրս էլ չեն վերադարձել հոգաբարձութեան փոխարինաբար վերցրած դրամական նպաստը։

Անհրաժեշտ է, որ հոգաբարձութիւնը պաշտօնապէս յայտարարէ՝ արդեօք ճիշտ է պ. Տ. Յովհաննիսեանի հաղորդածը և, եթէ ճիշտ է, թող հոգաբարձութիւնը բարեհաճէ պարզել՝ թէ որ օրէնքի կամ դպրոցական կանոնադրութեան որ կէտի հիման վրա է կատարել այդ նպաստի բաշխումը և ինչու առաւելութիւնը տրված է Ղազախի գիւղացիներին, քանի որ հայ-թուրքական ջարդերից անհամեմատ աւելի փնասվել են և ծանր կորուստներ ունեցել այլ հայաբնակ վայրերը...

Նաև կարևոր է պարզել, թէ ինչ վերաբերմունք է ունեցել մեր հոգևոր վարչութիւնը այդ գործին։ Չէ՞ որ թեմական առաջնորդը օրէնքով համարվում է նախագահ հոգաբարձութեան։

Առ այժմ այսքան։

Դիտող

—

Թիֆլիս, 19 սեպտեմբերի

Գրում եմ հասարակութեան կասկածը փարատելու համար միայն։

Ըստ երևոյթին Տ. Սայաթ-Նովայի «Հոգեժարտութեանը» նուիրած «Մշակի» № 194-ի մէջ տպված նամակը (որի կրկնութիւնն է № 204-ը՝ երբ մի անգամ հերքվել է թերթիդ խմբագրութեան կողմից, երկրորդ անգամ մի խումբ անձնաւորութիւններ նոյնպէս վկայել են յօդուածի և յօդուածագրի արհամարհանքի միայն արժանի լինելը, մի երրորդ անգամ ես ես ստիպված եմ սև վարագոյրի տակ թաղելու այդ վերջնապէս։

Որ ես 12 տարուց ի վեր այրի եմ, ամուսին չեմ ունեցել, անժխտելի իսկութիւն է, եթէ չէ խանգարում այն, որ ամուսինս իր 12 տարի անյայտացումից յետոյ 1905 թուին յանկարծ լոյս է ընկնում մի օր, թոքախտով հիւծված, մերկ ու քաղցած և 15 օրում մահանում։—Իրաւապէս ոչ մի տուն չունեմ երկնքի տակ և ոչ մի տան եկամուտից չեմ օգտվում։ Միայն թէ, ի միջի այլոց ասեմ, սկեսուրիս և խեղագաղ տեգորս անունով հաստատված պապենական 2 տուն է մնացած, այդ երկուսից տարեկան ստացվում է մօտ 350 ր.։ Բանկի ներժուծման 180 ր., գնահատման և պետական հարկերի 50 ր., միասին 230 ր., ելը հաշվելով, մնացած տարեկան 120 ր. մուտքը վերցնում է սկեսուրս իր և իր որդու ապրուստի համար։ Այդ 12 տարվայ մէջ, պլուս վերջին 3 տարին, ոչ ոքից ոչ մի կօպէկի օգնութիւն չեմ ստացել 5 զաւակներիս համար, բացի դպրոցներից, որոնք երբեմն ուսում նավարձից զիջում էին։ Ի դէպ ասեմ, որ յօդուածագիրը՝ «պաշտօնաթող. երկրաչափ, կոլլեժսկի ասէսօր պ. Տիրիդատ Մօիսէիչ Սայաթ Նովան» մի անգամ միայն ստորագրութիւններով իմ ծանօթներից և բարեկամներից փող հաւաքեց մի որդուս ուսումնավարձը լրացնելու համար (3 տարվայ կենող լինելով հօրանցս տանը, եղբայրներովս եղբօր կամ հօր, առանց սակայն հաւատալու դրա վերջին տարիների բռնած դիրքին) և յայտնի է նոյնիսկ «Մշակի» խմբ. անդամներին անգամ, որ հաւաքած 40 բուբլուց 20-ն է միայն յանձնում մեզ. իսկ թէ դաս է պարապել իմ ընտանիքի անդամներից մէկն ու մէկի հետ, ստացել է ամսական 10 ր. կօպէկ-կօպէկ։ Դժբաղդաբար միայն, ուշ եմ իմանում, որ պ. Սայաթ-Նովան ինձանից միայն օգտվելու և իմ աշխատանքով իր գոյութիւնը ապահովելու դիտաւորութիւն է ունեցել։ (Բարի ախորժակ)։—Գալով իմ և հարանացուիս (և ոչ հարսի) ռոճիկների և պաշտօնատեղերի հարցին, ոչ մէկը ուղիղ չէ յիշատակած և հարանացուս դրամական ոչ մի կապ դեռ ևս չէ ունեցել իմ ընտանիքի հետ (պարապութեան հետևանքը միշտ այդպիսի «ճշմարտութիւններ» յօրինելու մէջ է կայանում)։ Այն ինչ, որ գլխաւորն է, իրան փառապանծ բարերար յորջորջող պ. Տիրիդատի եռանդուն ինտրիգների արդիւնք է, հաւանօրէն (յիշելու շատ բան կայ, բայց զանց եմ առնում. ցանկացողները մի ժամն էլ կարող են ոստիկանական արձանագրութիւնից տեղեկանալ, տրված Թիֆլիսի II բաժ. հաշտ. դատաւորին), որ ես դեռ ևս անպաշտօն եմ մնացել։ Նրա այդպիսի ոտնձգութիւնների համար կարող են վկայել շատ հեղինակաւոր անձեր և հիմարկութիւններ անգամ։ Բայց ուշ դէպ դատ բանամ նրանից ստացած իմ բարոյական զրկանքների և նիւթական վնասների համար. պահանջներ անել այդպիսի մի մարդուկից, իմ պատի զգացմունքի դէմ է այդ։ Իսկ ուր մնացին երեկայութեան ստեղծած իմ անսպառ ոսկու հանքերը, ընթերցող։

Վարժուհի Ա. Մանուկեան

Ժամ. խմբագիր՝ Հ. ԱՌԱՔԵԼԵԱՆ
Հրատարակիչներ՝ Ա. ՔԱԼԱՆԹԱՐ
Յ. ՏԷՐ-ՄԱՐԿՈՍԵԱՆ
Հ. ԱՌԱՔԵԼԵԱՆ

ԱՂՅՈՒՍԱԲՈՒԹԻՒՆՆԵՐ

ԱՌԱՋԻՆ ՄԱՄՆԱՒՈՐ ՀԻՒԱՆԴԱՆՈՑ
ԲԺՇԿԱՊԵՏ Բ. ՆԱՒԱՍԱՐԴԵԱՆԻ
Հիմնված 1880 թ.
(Գուկիա, Վօրոնցօվի արձանի հանդէպ)
Ամեն օր, բացի կիրակի օրերից
ԸՆԴՈՒՆԵԼՈՒԹԻՒՆՆԵՐ՝

Բ. Ա. ՆԱՒԱՍԱՐԴԵԱՆ—11—12 ժ. վիրաբուժութեան և վեներական (սիֆիլիս) հ.։
Կ. Մ. ՉԻԿՕՎԱՆԻ—9½—10 ժ. ոչքի ներքին և նեարդային։
Զ. Ի. ԲԱԲԱՆԱՄԵԱՆՑ—10—11 ժ. մանկաբարձութեան, կանանց և երեխայոց հ.։
Ն. Տ. ՄՈՒԼԻՆ—10—12 ժ. ականջի, կոկորդի և քթի հիւ.։
Մ. Գ. ԱՒԵՏԻՍԵԱՆ—11—12 ժ. մորթու, վեներակ., վիրաբուժութեան և միզասեռ.
Ա. Մ. ՓՈՒՂԻՆՕՎ—12—1 ժ. ներքին և երեխայոց հիւ. և ծաղկահատ.։
Ա. Գ. ԿԱՐԱՊԵՏԵԱՆՑ—1—1½ ժ. ներքին և երեխայոց հ.։
ԿԻՆ-ԲԺԻՇԿ Ա. Մ. ՏՈՒՐԲՕՎԻՉ — 1½—2 ժ. մանկաբարձութեան։
Գ. Ց. ԳՈՒՐԳԵՆՕՎ—12—12½ ժ. կանանց և մանկաբարձութեան։

ԵՐԵԿՈՅԱՆԵՐԸ

Օ. Վ. ԳԵՑԵՎՍԿԱՑԱ ԷՆԳԵԼ—5½—6 ժ. մանկաբարձ. կանանց և երեխայոց հ.։
Ի. Ֆ. ՄԱՐՑԻՇԵՎՍԿԻ—5½—6½ ժ. ներքին և երեխայոց հիւ. և ծաղկահատ.։
Ա. Բ. ԳՐԻԳՈՐԵԱՆ—6—7 ժ. վիրաբուժ.։

Վճարը 50 կ.։ Զքաւորները ձրի։ Համախորհրդի (կոնսիլիումի) և օպիրացիայի համար առանձին։
Հիւանդանոցի վերատեսուչ՝
Բժշկապետ Բ. Նաւասարդեան

ՀՐԱՒԷՐ

Սեպտեմբերի 28-ին, կիրակի, ժամը 12-ին պատարագից յետոյ, լինելու է ծխական ժողով՝ քննելու հոգաբարձութեան հաշիւները։ յետոյ ընտրելու երեք հոգաբարձուներ Մողնու ս. Գէորգ եկեղեցու Գայիանեան օրիորդաց դպրոցի համար. ուստի՝ խնդրում եմ Մողնու եկեղեցու բոլոր արական սեռի ծխականներին, որոնց հասակը 25 տարուց պակաս չէ, շնորհ բերել յիշեալ եկեղեցին նշանակված օրը՝ ներկայ լինելու հաշուին և ընտրութեանը։

Սիմէօն աւագ-քահ. Զժշկեան
2—1

ՀՐԱՒԷՐ

Համաձայն հոգևոր իշխանութեան հրամանի, Թիֆլիսի Թանդոյեան և Նորաշէն եկեղեցու Կուկիայի ծխականները հրաւիրվում են սեպտեմբերի 28-ին, կիրակի ժամը 12-ին նոյն Նորաշէն եկեղեցին՝ ընտրելու չորս աշխարհական և երկու հոգևորական հոգաբարձուներ՝ Կուկիայի գերեզմանատունը կառավարելու և պահպանելու համար։

Ներսէս աւագ-քահ. Ղամազեան
Ալէքսանդր քահ. Տէր-Յովհաննիսեան
1—1

ԲԺԻՇԿ
Գ. Ն. ՄԱՂԱԲԵԱՆ

Ներքին և երեխայոց հիւանդութիւններ, առանձնապէս ստամոքսի և աղիքների հիւանդութիւններ։

Հիւանդների ընդունելութիւնը՝ 12—1 առաւօտ. 5—6 երեկոյեան
Միքայէլեան փող., № 36, տ. Ճավճանիձէի։
100—24

ԲԺԻՇԿ
Ա. Մխիթարեանց

Սիֆիլիս, վենեական, միզասեռական եւ մորթու ցաւեր

Ընդունելութիւն ամեն օր՝ 12—2 ժ. ցեր. 5—7 ժ. երեկ.
Սօլոլակ, Բէհբութեան փողոց № 33.
(հ. շ.) 100—9

Մի ֆրանսուհի օրիորդ

տալիս է ֆրանսերէն, անգլիերէն լեզուների և նկարչութեան դասեր։
Առանձին և խմբական դասեր։
Հասցէն՝ Բեբուտովսկայա № 56, բնակարան Եակուլովի, № 7.
10—2

Սրանով յայտնում եմ ի գիտութիւն յարգելի
ՀԱՅԱՎԱՃԱՌՆԵՐԻ,
ՈՐ ՍՏԱՒԻՐՈՊՈԼ ՔԱՂԱՔՈՒՄ ԲԱՑԵԼ ԵՄ ՀԱՅԱՎԱՃԱՌԱՏՈՒՆ

Գլխաւոր նպատակս է մատակարարել Անդրկովկասեան խղճաբներին ամեն տեսակ հացաճաշիկ եւ ալիւր թէ տեղիցս և թէ շրջակայ կայարաններից։

Ալիւրը պատրաստում եմ սեփական ընտիր ցորենից՝ հետևեալ տեսակները—«կրուպչատկա», «սէյանկա» և «բաղմօր»։

Հետաքրքրվողներին խնդրում եմ նմուշները՝ միաժամանակ նշանակելով և գները։

Գների զգալի փոփոխութեան ժամանակ կլիէնտներին յայտնվում է հեռագրով։

Խնդրում եմ ի նկատի ունենալ, որ ամեն մի ապրանք ես գնում եմ առաջին ձեռքից, այնպէս որ այդ հանգամանքը հնարաւորութիւն է տալիս ինձ վաճառել ուրիշներին ամենանօրմալ գներով։

Յուսով եմ, որ չարգելի վաճառականները անուշադիր չեն թողնի իմ ֆիրման։

Պատուէրները կը կատարվեն կարելոյն չափ շտապով, ամենայն ճշտութեամբ և բարեխղճօրէն։

Թղթակցութիւնները հայերէն և ռուսերէն լեզուներով։

Յարգանքով՝ Մ. Յ. ՖԱԼԱԿԵԱՆՑ

Հասցէ՝ {Նամակի համար. Ставрополь.-губ., М. А. Фалакянцу, почт. ящ. № 48. Հեռագրի համար. Ставрополь.-губ., Фалакянцу.
(շ.) 50—6

ՀԱՅԿԱԿԱՆ ԴՐՈՇՄՆԵՐ

Ազգային ամէն կարգի նշանաւոր գործիչները ուզելով դիւրացնել և դիւրագին միջոցով մը ծանուցանել թէ հայուն և թէ օտարին, գեղարուեստի ամենանուրը միջոցով պատրաստեցինք յատուկ դրոշմներ և այսօր ի հրապարակ կը հանենք հետևեալները.

1. Հ. Այլիան
2. Ռ. Պատկանեան
3. Մ. Նագարեանց
4. Լօրիս Մելիքեան
5. Րաֆֆի
6. Յ. Այվազովսկի
7. Արշակ Տէր-Ղուկասեան
8. Պ. Պէշիկթաշլեան
9. Պ. Ագամեան
10. Ռ. Արովեան

Հետզհետէ պիտի հրապարակ հանենք նաև ուրիշներ, եթէ ընդունելութիւն գտնէ, պիտի ջանանք նաև ազգային նշանաւոր քաղաքներու, վանքերու և այլ տեսարաններու դրոշմներ ի հրապարակ հանել նոյն ոճով։

Իւրաքանչիւր գործիչի անունը գրեցինք նաև ֆրանսերէն. հերոպացուց ևս ուզելով ծանուցանել մեր երեսի դէմքերը։ Այս դրոշմները կրնան գործածուիլ թէ նամակի պատասխանաց կպցնելով և թէ կարտերու վրայ, ինչպէս նաև նամակի թղթերու սկիզբը։

Ստանալու համար դիմել ուղղակի մեզ։

Կը վաճառեմք հետեւեալ գներով

5000	դրոշմ միանուագ	ֆր.	100
1000	» »	»	25
500	» »	»	13
100	» »	»	3

Պատուէրներ կը կատարուին միայն կանխիկ վճարմամբ, առաքման ծախքը մեր վրայ է։ Մեր հասցէն է՝ Imprimerie Arménienne, Venise (Italie) (օ.մ.) 3—2

Առեւտրի եւ արդիւնաբերութեան մինիստր. տնօրինութեան հերոյ գտնվող
Տ. Մ. ՓԻԼՕՅԵԱՆԻ
Առեւտրական Գիտութիւնների Կուրսեր
(Թիֆլիս, Միքայէլեան պրոսպ. տուն № 24|4)

Տալիս են երկսեռ անձերին մասնագիտական առեւտրական կրթութիւն։ Դասընթացքն աւարտողներին տրվում են ատեստատներ։ Առարկաներն են. 1) Հաշուապահութիւն (պարզ, իտալ., գերմ., ֆրանս., ամերիկական, բանկային և գործարանական), 2) Առեւտրական թւաբանութիւն, 3) Քաղաքատնտեսութիւն, 4) Օրէնսգիտութիւն (առեւտրական իրաւունք, մուրհակի կանոնադրութիւն), 5) Առեւտրական թղթակցութիւն հայերէնի վրա, 7) Վաճառագրութիւն, արագագրութիւն (ամենատ ձեռքի ուղղումն)։ Առարկաներն ուսուցանվում են Արևմտեան Եւրոպայի առեւտրական ակադեմիաների ծրագրով։ Ամբողջ տարվայ վճարն է 60 ր.։

Գրելու մեքենայի վրա գրելու դասեր։

—| ՕՏԱՐ ԼԵԶՈՒՆԵՐ |—

Զբաղմունքների սկիզբը սեպտեմբերի 15-ին։ Խնդիրների ընդունելութիւնը սեպտեմբերի 1-ից ամեն օր ժ. 10—12 և 4—7։

Համառօտ ծրագիրը և կանոնները ձրիաբար տրվում և ուղարկվում են կուրսերի շէնքում։

Կուրսերի հիմնադիր՝ առեւտր. գիտութեան կանդիդատ՝
Տ. ՓԻԼՕՅԵԱՆ
(ա. օ.) 20—18

ՏՊԱԳՐՈՒԹԵԱՆ
համար պատրաստ են

1) Եղիշ. Ամիչիսի «Սիրտ» գրքից Աշակերտի յիշատակարանը 30 պատկերով, թարգմանված գերմաներէնից։ (Նոյն գրքի Ամսօրեայ պատմութիւնները հրատարակել եմ առանձին գրքով՝ 10 պատկեր մէջը, գինը 40 կոպ.)։

2) Գրիմմի հէքիաթների հատընտիր ժողովածու. բնագրից թարգմանած, բազմաթիւ պատկերներով։

Հրատարակելու գործում կարիք ունեմ աղնուասիրտ մարդոց աջակցութեան։ Հասցէ՝ Թիֆլիս, Միքայէլեան փողոց, № 82.

Քամալեանց Ս.
(չ. շ.) 5—2

ԿՐՕՆԻ դասագրքեր

	գինն է ր.	Զեղչ %
Աշակերտաց համար		
1. Ռուսերէն տ. պատկերազարդ.	» 25	25
2. Երկրորդ »	» 20	20
3. Երրորդ »	» 30	20
5. Հին-ուխտ պատկերազարդ	» 50	25
5. Նոր ուխտ	» 40	20
6. Գործք առաքելոց	» 40	20
Ուսուցչաց համար		
7. Ուղեցոյց նոր-ուխտի . . .	2 5	35
8. Ուսուցումն քրիստ. կրօնի Դ.	1 50	35
9. Ուսուցումն » » Ե.	» 50	35
10. Տան պատուիրան. . . .	» 50	35

Ծանկացողները կարող են դիմել՝

ա. Магазинъ Г. С. Мясникова—Дворцовая
բ. Գրավաճառանոցներ՝ Գուտտենբերգ, Կենտրոնական, Թառայեանց, Քեսսկ, Յովհաննիսեան (Երևանում) — Թիֆլիսում
գ. »
դ. »
ե. »
զ. »
է. » Сотрудникъ (Բագուում)
ը. Ինձ դիմողները՝ Тифлисъ, Коммерческое училище, ստանում են 20, 25, 35% զեղչ։ Վճարը եթէ ամսից յետոյ՝ ապահով երաշխաւորութեամբ։

Մահակ ա. ք. Մահակեանց
(հ. շ.) 10—9

Լոյս տեսաւ և վաճառվում է
ԴԱՍԱԳԻՐՔ ՊԱՏՄՈՒԹԵԱՆ
Նախապատմական մարդը
—) և (—
ՀԱՅԿԱԿԱՆ ԱՌԱՍՊԵԼՆԵՐ

25 պատկերով և 2 գունաւոր մեծ քարտէզով։

Ш բաժանմունքի դասընթացք

Յատկապէս պատրաստված 1906 թ. հայոց ծխական դպրոցների համար մշակված ծրագրի համաձայն։

Կազմեցին
Գ. ՎԱՐԴԱՆԵԱՆ և Ռ. ԽԱՆ-ԱԶԱՏ

ԳԻՆԸ 50 ԿՈՊԵԿ

Դիմել «Գուտտենբերգ» գրավաճառանոցին կամ կազմողներին՝ Тифлисъ, Сурмъ-Нишанское училище.
10—10

ԿԱՐԵ ՄԵՔԵՆԱՆԵՐ!

«Զինգեր» տեսակի։ Նախ քան գնելը Դուք պէտք է պահանջէք մեր նոր պատկերազարդ պրէյսկուրանտը, որը ուղարկվում է ձրի։ ԱՌԱՋԻՆ ԱՂԲԻՒՐԸ! Հետևապէս աւելի էժան է և սոլիդ՝ քան ուրիշ տեսակները։ Հասցէագրել՝ «Русское Т-во Швейныхъ Машинъ», г. Варшава, Главная, № 45.
(շ.) 3—2

ԸՆԴՀԱՆՈՒՐ ԵԿԵՂԵՑԻԿՆ
ՊԱՏՄՈՒԹԻՒՆ
Հատոր Ա.—Հին Եկեղեցին
Հիւսեց
Երուանդ վարդապետ Տէր Մինասեանց
XII+390 էջ, գինն է 1 ր. 25 կ.
Դիմել Էջմիածին՝ Երուանդ վարդապետին։
(չ. ու. շ.) 5—5

Կարապետ ծ. վարդապետի
ՀԱՅՈՑ ԵԿԵՂԵՑԻՈՅ ՊԱՏՄՈՒԹԻՒՆ
Մասն Ա. VI+218,
Գինն է 1 ռուբ.
Դիմել Էջմիածին՝ Երուանդ վարդապետին։
(հ. շ. ե.) 5—5

---

*) Այս նամակը վաղուց է ստացված, բայց նիւթերի շատութեան պատճառով անկարելի եղաւ մինչև այժմ տպել։ Խմբ.

**) Ի նկատի պէտք է ունենալ, որ ուսուցչ. և հոգաբ. խառը ժողովի որոշմամբ այս տարի դպրոցը կառավարել է ուսուցչ. ժողովը. աւագ ուսուցիչը համարվել է նախագահ նոյն ժողովի։ Յ. Զ.